ՀՀ–ում ծննդի պետական գրանցման ընթացակարգի ուսումնասիրություն. հիմնախնդիրներ և հաղթահարման հեռանկարներ

ԶԵԿՈՒՅՑ

Երևան

2013

Զակույցը պատրաստվել է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից՝ ՄԱԿ–ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Աշխատանքային խումբ.

Արման Դանիելյան – ուսումնասիրության համակարգող

Տաթևիկ Ղարիբյան – ավագ իրավաբան

Անի Վարդանյան - իրավաբան

Յուլիանա Մելքումյան - սոցիոլոգ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ

Այգեստան 11 փ, տուն 43

Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հեռ. (+37410) 574317

Ֆաքս. (+37410) 559634

csi@csi.am

www.csi.am, www.hra.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ծննդի գրանցման անհրաժեշտությունը 5
2. Հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը 6
3. Ծննդի գրանցման իրավունքը 9
4. Ծննդի գրանցման ընթացակարգը ՀՀ-ում 10
5. Ծննդի գրանցումը բժշկական հաստատությունում երեխայի ծննդյան դեպքում 15
6. Ծննդի գրանցումը բժշկական հաստատությունից դուրս երեխայի ծննդյան դեպքում 21
7. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ծննդի գրանցումը 22
7.1. Գտնված (ընկեցիկ) երեխաների ծննդի գրանցումը 26
7.2.Երեխայի խնամքն իրականացնող հաստատությունների դերը ծննդի գրանցման հարցում 28
8. ՀՀ քաղաքացիների այլ երկրում ծնված երեխայի ծննդի գրանցումը 29
9. Օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականների, ապաստան հայցողների երեխաների ծննդի գրանցումը 31
10. Երեխայի ծննդի գրանցումը ծնողների անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում 32
11. Ծննդի չգրանցման ռիսկերը և կանխարգելման մեխանիզմները 36
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 41
ՀԱՎԵԼՎԱԾ 44

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Հապավում	Բացատրություն
ԱԾԽՄ	Առանց ծնողական խնամքի մնացած
ԵԻԿ	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
ԸԿԵԻՊԲ	Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին
ԽՀՀ	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
ԽՀՄ	Խնամակալության և հոգաբարձության մարմին
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔԿԱ	Քաղաքացիական կացության ակտ
ՔԿԱԳ	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

1. ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծննդի գրանցումը զգալի կարևորություն է ներկայացնում մյուս իրավունքներից օգտվելու համար:

Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անուն և քաղաքացիություն ունենալու իրավունք, որի կապակցությամբ օրենքը երաշխավորում է երեխայի ծննդյան փաստի գրանցումը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից՝ անկախ երեխայի, նրա ծնողների կամ օրինական ներկայացուցիչների ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից[1]:

Ծննդի գրանցմամբ պետությունը ճանաչում է ոչ միայն անձի գոյության փաստը, այլ նաև նրա ինքնությունը՝ գրանցման ակտում ներառելով տվյալներ երեխայի անվան, ծննդյան վայրի և ժամանակի, ազգության, ծնողների ինքնության, երեխայի բնակության վայրի և այլնի մասին[2]: Ծննդի պետական գրանցման բացակայության դեպքում անձը դառնում է «իրավաբանորեն անտեսանելի», և զգալիորեն սահմանափակվում է պետության պաշտպանությունից և ծառայություններից օգտվելու նրա հնարավորությունը: Մասնավորապես՝ ծննդի պետական գրանցումը անհրաժեշտ է անվճար բժշկական օգնություն ստանալու, կրթության, պետական նպաստներից և սոցիալական աջակցության այլ ձևերից օգտվելու, ազատ տեղաշարժման, ամուսնության, աշխատանքի, ընտրության, սեփականություն ունենալու, անձնագիր ձեռք բերելու և այլ իրավունքների իրացման համար: Նման իրավիճակում բարձրանում է նաև ծննդի գրանցում չունեցող անձանց բռնության և շահագործման տարբեր ձևերի, այդ թվում՝ թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկերը:

Ծննդի պետական գրանցումը կարևոր դեր է կատարում նաև ապաքաղաքացիության հարցում, ինչը բազմիցս ընդգծվել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի եզրակացություններում, որտեղ նշվում է, որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման բացակայությունը անձանց խոցելի է դարձնում ապաքաղաքացիության և դրանից բխող ռիսկերի նկատմամբ, և որ ծննդի գրանցումը էական կարևորություն է ներկայացնում ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման հարցում:[3] Մասնավորապես հայտնի է, որ ծննդով պայմանավորված քաղաքացիության ձեռքբերումը հիմնվում է կամ հողի իրավունքի *(jus soli)* կամ արյան իրավունքի սկզբունքի *(jus sanguinis)* վրա: Հողի իրավունքի

---

[1] «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996թ. մայիսի 29, հոդված 4

[2] «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, 2004թ. դեկտեմբերի 8, հոդված 22

[3] UN High Commissioner for Refugees (UNHCR), *Conclusion on civil registration*, 17 October 2013, No.111(LXIV)-2013, http://www.refworld.org/docid/525f8ba64.html

գործողության դեպքում քաղաքացիություն շնորհվում է տվյալ պետության տարածքում ծնված անձանց, իսկ արյան իրավունքի դեպքում՝ երեխաները ժառանգում են իրենց ծնողների քաղաքացիությունը: Որպես կանոն, պետությունները կիրառում են այս սկզբունքների որոշակի համադրություն:

Անհրաժեշտ է նշել, որ ծննդի պետական գրանցումը ինքնին քաղաքացիություն չի շնորհում, սակայն գրանցման ակտում փաստվում են երեխայի ծննդյան վայրը, ինչպես նաև ծնողների քաղաքացիությունը, այսինքն՝ այն հիմքերը, որոնք թույլ են տալիս հաստատել երեխայի և պետության միջև իրավական կապը և հիմք հանդիսանալ հետագայում քաղաքացիության ձեռքբերման համար:

Ծննդի պետական գրանցումը կարևոր է ոչ միայն իրավական (առանձին երեխայի շահերի և իրավունքների պաշտպանության), այլև վիճակագրական տեսանկյունից՝ տրամադրելով կարևոր տվյալներ գրանցման ենթակա իրադարձությունների մասին[4], ինչը թույլ է տալիս պետությանը արդյունավետ քաղաքականություն մշակել առողջապահության, կրթության, զբաղվածության, ֆինանսական և տնտեսական զարգացման , արդյունաբերության և առևտրի, սոցիալական ապահովության և այլ ոլորտներում:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2013թ. օգոստոսից նոյեմբեր ամիսների ընթացքում Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ–ն ՄԱԿ–ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացրել է որակական հետազոտություն, որի նպատակն էր ուսումնասիրել ՀՀ–ում ծննդի պետական գրանցման գործընթացը:

Հետազոտական նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ **հետազոտական խնդիրների** լուծում՝

- Ուսումնասիրել ՀՀ-ում ծննդի գրանցման ընթացակարգում առկա օրենսդրական և գործնական խնդիրները՝ ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման տեսանկյունից,
- Ուսումնասիրել ծննդի գրանցման գործընթացում մասնակից մարմինների դերակատարումը,
- Պարզել մասնակից մարմինների հասանելիությունը և մատչելիությունը,

[4] Համաձայն «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ պետական գրանցման ենթակա են ծնունդը, ամուսնությունը, ամուսնալուծությունը, որդեգրումը, հայրությունը որոշելը, անվան փոխումը, մահը:

- Բացահայտել ծնունդը չգրանցելու ռիսկերը ՀՀ–ում,
- Պարզել ՀՀ քաղաքացի չհանդիսացող ծնողների երեխաների ծննդի գրանցման ընթացակարգը և խնդիրները,
- Պարզել երեխաների ծննդի գրանցման ընթացակարգը և խնդիրները գտնված և առանց ծնողական խնամքի թողնված երեխաների դեպքում,
- Պարզել անձը հաստատող փաստաթուղթ չունեցող ծնողների երեխաների ծննդի գրանցման ընթացակարգը և խնդիրները,
- Ուսումնասիրել այն երեխաների (և նրանց ընտանիքների) պատմությունները, որոնք չունեն ծննդյան գրանցում,
- Մշակել առաջարկություններ ծննդի չգրանցման դեպքերը հայտնաբերելու, կանխելու և կրճատելու ուղղությամբ:

Սույն ուսումնասիրության նպատակներից ելնելով՝ կդիտարկվի միայն կենդանածնության դեպքում ծննդի պետական գրանցման ընթացակարգը՝ բացառելով մահացած ծնված և կյանքի 4 շաբաթվա ընթացքում մահացած, ինչպես նաև՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու դեպքում երեխաների ծննդի գրանցման ընթացակարգերը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ 3 մարզերում՝

- **Լոռի** (1 քաղաքային և 1 գյուղական համայնք)
- **Արագածոտն** (1 քաղաքային և 1 գյուղական համայնք)
- **Գեղարքունիք** (1 քաղաքային և 1 գյուղական համայնք),

և Երևան քաղաքի 3 համայնքներում՝ **Կենտրոն, Շենգավիթ, Քանաքեռ–Զեյթուն**:

Հետազոտական խնդիրների բազմակողմանի ուսումնասիրությունն ապահովելու համար նշված 9 համայնքներում իրականացվել են **62 փորձագիտական հարցազրույցներ** հետևյալ մարմինների առավել իրազեկ ներկայացուցիչների հետ՝

1. Մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինների աշխատակիցներ– 5 փորձագետ,
2. Համայնքի ղեկավարներ– 4 փորձագետ,
3. Խնամակալության և հոգաբարձության մարմինների անդամներ– 5 փորձագետ,
4. Ծննդատների/հիվանդանոցների աշխատակիցներ– 6 փորձագետ,
5. Առողջության առաջնային պահպանման կենտրոնների (պոլիկլինիկաների) աշխատակիցներ– 13 փորձագետ,
6. Ոստիկանության աշխատակիցներ– 9 փորձագետ,
7. ՔԿԱԳ գործակալությունների աշխատակիցներ–7 փորձագետ,
8. Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների աշխատակիցներ– 4 փորձագետ,

9. Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ– 5 փորձագետ,
10. Մանկատների, Երեխայի խնամքի կենտրոնների աշխատակիցներ– 4 փորձագետ։

Բացի փորձագիտական հարցազրույցներից, կիրառվել է նաև **դեպքի ուսումնասիրության (case-study)** մեթոդը։ Ընտրված մարզերում և Երևան քաղաքում իրականացվել է 11 դեպքի ուսումնասիրություն։ Ուսումնասիրվել են ծննդի գրանցում չունեցող երեխաների և նրանց ընտանիքների պատմությունները։

Պետք է նշել, որ ՀՀ-ում գոյություն չունի ծննդի գրանցում չունեցող երեխաների մասին տվյալների միասնական և պարբերաբար թարմացվող բազա, որը թույլ կտար վիճակագրական տվյալներ ներկայացնել։ Մյուս կողմից՝ հանրապետություն տեղի ունեցած ծնունդների վերաբերյալ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները հիմնվում են գրանցված ծնունդների մասին ՔԿԱԳ գործակալության տարածքային բաժինների կողմից ներկայացվող տվյալների վրա, ինչը թույլ չի տալիս համեմատություններ կատարելու միջոցով ենթադրություններ անել չգրանցված ծնունդների հնարավոր թվի մասին։

Ստորև ներկայացնում ենք 2008-2012 թվականներին ՀՀ ՔԿԱԳ մարմիններում գրանցված ծնունդների թիվը.

Տարին	Ծնունդների թիվը
2008թ.	41.185
2009թ.	44.413
2010թ.	44.825
2011թ.	43.340
2012թ.	42.480

3. ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ծննդի գրանցումը առաջին անգամ մարդու իրավունք է ճանաչվել 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով:[5] Հետագայում՝ 1966թ.–ին Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և 1989թ. ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով ծննդի գրանցման իրավունքը պետությունների համար ձեռք է բերում պարտադիր իրավաբանական ուժ:

Զարգացնելով ՔՔԻՄԴ-ի դրույթները[6]՝ ԵԻԿ-ի 7-րդ հոդվածը սահմանում է, որ «Երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք»[7]: Ծննդի գրանցման իրավունքը սերտորեն կապված է երեխայի ինքնության իրավունքի հետ: Պետությունը պարտավորվում է օրենքով նախատեսված կարգով՝ առանց անօրինական միջամտության հարգել երեխայի իրավունքը՝ պահպանելու իր ինքնությունը՝ ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը: Եթե երեխան անօրինական կերպով զրկվում է իր ինքնության որոշ կամ բոլոր տարրերից, մասնակից պետությունները տրամադրում են համապատասխան աջակցություն և պաշտպանություն՝ շուտափույթ կերպով նրա ինքնությունը վերականգնելու նպատակով:[8] Միաժամանակ, ԵԻԿ 2-րդ հոդվածը սահմանում է, որ կոնվենցիայով նախատեսված իրավունքները պետք է երաշխավորվեն յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խտրականության:

ՄԱԿ-ի փաստաթղթերի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտերի, այդ թվում՝ ծննդի գրանցումը պետք է լինի ***պարտադիր***, համընդհանուր, մշտական և շարունակական՝ ապահովվելով անձնական տվյալների գաղտնիությունը:[9] Գրանցումների պարտադիր լինելու պահանջը ենթադրում է, որ օրենսդրությամբ պետք է սահմանվի որոշակի անձանց կամ մարմինների՝ ծննդի մասին հայտարարությունը տալու պարտականություն:[10]

---

[5] ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ. դեկտեմբերի 10, 217 A (III), հոդված 15

[6] ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ. դեկտեմբերի 16, հոդված 24 «Յուրաքանչյուր երեխա պետք է գրանցվի իր ծնվելուց անմիջապես հետո և ունենա անուն»

[7] ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ. նոյեմբերի 20, հոդված 7

[8] Նույն տեղում, հոդված 8

[9] UN (2013), Principles and recommendations for a vital statistics system: Revision 3, http://unstats.un.org/unsd/demographic/standmeth/principles/unedited_M19Rev3en.pdf, page 60

[10] UN Department of Economic and Social Affairs Statistics Division (1998). Handbook on Civil Registration and Vital Statistics Systems: Preparation of a Legal Framework. Series F, No. 71. New York, United Nations. http://unstats.un.org/unsd/publication/SeriesF/SeriesF_71E.pdf , page 17

Քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքով սահմանվում է, որ ծնունդը ենթակա է պետական գրանցման, ինչը պարտավորեցնում է ՔԿԱԳ մարմնին իրականացնելու ծննդի գրանցում: Չնայած օրենքը չի նախատեսում որևէ անձի կամ մարմնի՝ ծննդի մասին հայտարարություն տալու պարտականություն, երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի համաձայն՝ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է, ինչից կարելի է ենթադրել, որ ծննդի մասին հայտարարություն տալու պարտականությունը առաջին հերթին կրում են երեխայի ծնողները: Ծնողների անգործության պարագայում միայն պետությունը ձեռնարկում է երեխայի շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ: Այս իմաստով Քաղաքացիական կացության ակտերի մասին օրենքով սահմանվում է հոգաբարձության և խնամակալության մարմնի՝ հայտարարություն տալու պարտականությունը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Հայաստանում ծննդի պետական գրանցման ընթացակարգը կարգավորվում է քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքով, Ընտանեկան օրենսգրքով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: ՔԿԱԳ մարմինների կողմից գրանցման են ենթակա 500գ և ավելի քաշով ծննդի բոլոր դեպքերը՝ անկախ կենդանածնության կամ մեռելածնության հանգամանքից[11]:

4. ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

Ծննդի գրանցումը ծննդի փաստի պաշտոնական գրառումն է պետական կառավարչական գործառույթ իրականացնող մարմնի կողմից, որով սահմանվում է անձի իրավական ինքնությունը:[12] ***ՀՀ-ում ծննդի պետական գրանցումն իրականացվում է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից ծննդյան ակտում համապատասխան գրառում կատարելու և դրա հիման վրա անձին պետական գրանցման վկայական տալու միջոցով:***[13]

Ծննդի գրանցումը կատարում է ՔԿԱԳ մարմինը՝ գրավոր հայտարարության հիման վրա, որը ՔԿԱԳ մարմնին պետք է ներկայացվի երեխայի ծննդյան օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում, սակայն օրենքով սահմանված ժամկետները բաց

---

[11] «Մանկական մահացության ու ծնունդների գրանցման և դասակարգման հիմնախնդիրների հետ կապված իրավիճակը բարելավելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 949–Ն, 2005թ. հունիսի 16, Հավելված N 3, կետ 4

[12] UNICEF Innocenti Research Centre (2007), "Birth registration and armed conflict", http://www.unicef.org/protection/birth_registration_and_armed_conflict(1).pdf, page 2

[13] «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 6

թողնելը չի կարող հիմք հանդիսանալ գրանցումը մերժելու համար[14]: Բացի ՔԿԱԳ տարածքային մարմիններից ծննդի պետական գրանցում կարող է իրականացվել ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գտնվող ամուսնության և ծննդի հանդիսավոր գրանցման պալատի կողմից:[15]

Այն դեպքում, երբ առաջանում է ծնողների կողմից մինչև մեկ տարեկան երեխայի ծննդի գրանցման մասին հայտարարություն տալու անհնարինություն, երեխայի ծննդի պետական գրանցման հայտարարությունը տալիս է երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարը կամ նրա լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով:[16] Օրենքը, սակայն, չի նախատեսում, թե համայնքի ղեկավարը ինչ կարգով պետք է տեղեկանա հայտարարություն տալու անհնարինության մասին:

Մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կամ լիազորված անձի կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա:[17] Այս դեպքում, օրենքը չի պարունակում ծնողների կողմից հայտարարության տալու անհնարինության պահանջ, այդպիսով, կարծես, ընդլայնելով համայնքի ղեկավարի և շահագրգիռ այլ անձանց լիազորությունները մեկ տարեկանից հետո չգրանցված ծնունդների գրանցման հարցում:

Երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է իր դիմումի հիման վրա՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու կանոններով սահմանված կարգով[18]: ՔԿԱ գրառումները վերականգնվում են ՔԿԱԳ մարմինների կողմից՝ այդ գրառումները **կորսվելու** դեպքում[19]: Անձը, ով ցանկանում է իրականացնել ծննդի գրանցումը նման կարգով, դիմումին կից պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, կորած ակտի գրանցումը իրականացրած ՔԿԱԳ մարմնի կողմից տեղեկանք այն մասին, որ ակտերի գրանցման գրքում գրանցումը

---

[14] «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի հրաման N 97-Ն, 2007 թ. հունիսի 6, Հավելված N 1, կետ 3

[15] «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 4

[16] Նույն տեղում, հոդված 16

[17] Նույն տեղում, հոդված 21

[18] Նույն տեղում, հոդված 21, տես նաև «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի հրաման N 97-Ն, Հավելված N 1, կետ 3

[19] «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության N 995-Ն որոշում, 2005 թ. հունիսի 23

բացակայում է, ակտի գրառումը վերականգնելու համար անհրաժեշտ տեղեկությունները հաստատող փաստաթղթեր, ներառյալ՝ զինվորական գրքույկ, աշխատանքային գրքույկ, կրթության մասին փաստաթղթեր, ամուսնության, ամուսնալուծության մասին փաստաթղթեր և այլն: Հաշվի առնելով պահանջվող փաստաթղթերի նման ծավալը և ընթացակարգի բարդությունը՝ 18 տարին լրացած անձի ծննդի գրանցումը նման կարգով գործնականորեն դառնում է անհնարին, քանի որ ծննդյան վկայականի բացակայության պարագայում անձը չի կարող ձեռք բերել և ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերից և ոչ մեկը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պարագայում, ծննդի մասին հայտարարություն տալիս է այն հաստատությունը, որում գտնվում է երեխան (մանկատուն, երեխայի խնամքի հաստատություն և այլն) կամ այն անձը, ում խնամքին նա հանձնվել է:

Ծննդի մասին հայտարարությունում պետք է նշվի երեխայի անունը, հայրանունը և ազգանունը, ծննդյան վայրը, ժամանակը, սեռը, անհրաժեշտ այլ տեղեկություններ:[20]

Գրանցումն իրականացնելու համար հայտարարությանը կից ՔԿԱԳ մարմնին պետք է ներկայացվի.

- ծնունդը հաստատող փաստաթուղթ,[21]
- ծնողների (նրանցից մեկի) և դիմողի անձը հաստատող փաստաթուղթ[22],

---

[20] «Քաղաքացիական կացության ակտեր մասին», ՀՀ օրենք, հոդված 16

[21] Ծնունդը հաստատող փաստաթղթերը սահմանված են ՀՀ քաղաքացիական կացության ակտերի մասին օրենքի 14 հոդվածով: Դրանք են՝

ա) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը.

բ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որը ցուցաբերել է բժշկական օգնություն ծննդի ժամանակ.

գ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեությամբ զբաղվող անձի կողմից՝ բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում.

դ) ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի (անձանց) կողմից, և երեխայի առողջության մասին բժշկական կազմակերպության տված տեղեկանքը՝ բժշկական կազմակերպությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:

[22] Անձը հաստատող փաստաթուղթ է համարվում **ՀՀ քաղաքացիների համար** անձնագիրը, զինվորական գրքույկը, ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, **ապաստան հայցողների համար**՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը, **փախստականների համար**՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը, **օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար**՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված

- երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ[23] (ամուսնության/ ամուսնալուծության վկայական, հոր մահվան վկայական):

Երբ վերը նշված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին, քաղաքացիական կացության ակտի գրանցումը մերժվում է:[24] Այն պարագայում, երբ բացակայում է երեխայի ծնունդը հաստատող փաստաթուղթը, ՔԿԱԳ մարմինը ծննդի գրանցումն իրականացնում է երեխայի ծնողաբերության փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:[25]

Ժամկետի բացթողնմամբ (մեկ տարեկանից հետո) ծննդի գրանցման դեպքում գրանցման հիմք հանդիսացող վերը նշված հիմնական փաստաթղթերից զատ դիմողը պարտավոր է ներկայացնել բժշկական տեղեկանք երեխայի առողջության մասին՝ հաստատելու համար երեխայի կենդանության փաստը, ինչպես նաև՝ տեղեկանք երեխայի ծնողի (ծնողների) բնակության վայրից, քանի որ ժամկետի բացթողնմամբ ծնունդները կարող են գրանցվել միայն երեխայի բնակության վայրում, որը հանդիսանում նրա ծնողի (ծնողների) մշտական բնակության վայրը[26]:

Բացառիկ դեպքերում, երբ ամուսնության մեջ գտնվող ծնողներից մեկի անձը հաստատող փաստաթուղթը չի կարող ներկայացվել (հայտնի չէ նրա գտնվելու վայրը, երկարատև գործուղման է և այլն), ՔԿԱԳ մարմինը չի կարող մերժել ծննդի գրանցումը: Նման ծնողի մասին տեղեկությունները լրացվում են ամուսնության վկայականի հիման վրա, իսկ բնակության վայրի մասին տվյալները լրացվում են դիմողի բանավոր հայտարարությամբ:[27]

Եթե երեխայի ծնողները ամուսնության մեջ չեն գտնվում, ապա հոր մասին տեղեկությունները լրացվում են.

- հայրության որոշման ակտի գրառման հիման վրա, եթե ծննդի գրանցման ժամանակ տեղի է ունենում նաև հայրության ճանաչում և գրանցում,

---

փաստաթղթերը, ՀՀ հատուկ անձնագիրը, կացության քարտը («Անձը հաստատող փասատթղթի մասին» ՀՀ կառավարության N 767 որոշում, 1999 թ. դեկտեմբերի 22):

[23] «Քաղաքացիական կացության ակտեր մասին» ՀՀ օրենք, հոդված 16

[24] Նույն տեղում, հոդված 10

[25] Նույն տեղում, հոդված 14

[26] «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի հրաման N 97-Ն, Հավելված N 1, կետեր 1, 3

[27] Նույն տեղում, կետ 9

- երեխայի մոր գրավոր հայտարարություն հիման վրա, եթե հայրությունը որոշված չէ: Այս դեպքում, երեխայի հոր անունը և նրա հայրանունը գրանցվում է մոր ցուցումով, իսկ հոր ազգանունը՝ մոր ազգանվամբ: Մոր կամքով երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունները կարող են նաև չնշվել:[28] Այսինքն՝ հոր մասին տեղեկությունները չլրացնելը չի կարող խոչընդոտել ծննդյան ակտի գրանցմանը:

Այն դեպքում, երբ երեխայի ծնողները կամ նրանցից մեկը չի հասել ամուսնական տարիքի, ծննդի պետական գրանցումը կատարվում է ընդհանուր կարգով՝անկախ անչափահաս հոր կամ մոր համաձայնությունից:[29]

Ծննդի գրանցումը (ներառյալ վկայականի տրամադրումը) կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից գրանցման հիմք հանդիսացող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի փաստացի ստացման օրը:[30] Ըստ հարցազրույցների՝ պրակտիկայում փաստաթղթերը ներկայացնելուց մեկ օր հետո երեխան կարող է ստանալ ծննդյան գրանցման վկայականը: Բժշկական հաստատությունում ծնված լինելու պարագայում, որպես կանոն, երեխայի ծննդի գրանցումը կազմակերպվում է մինչև ծննդկանին և երեխային բուժհաստատությունից դուրս գրելը, այսինքն՝երեխայի կյանքի առաջին երեք-չորս օրվա ընթացքում:

Օրենսդրությամբ ծննդի գրանցման ժամկետային սահմանափակումներ չեն նախատեսվում. ՔԿԱԳ մարմինը պարտավոր է իրականացնել ծննդի գրանցումը անկախ այն հանգամանքից, թե երբ է անձը դիմում: Ինչ վերաբերում է փաստաթղթերի հավաքագրմանը, ապա դրա տևողությունը կախված է ծնողներից: Եթե նրանք հետևողական են, ապա փաստաթղթերի հավաքագրումը երկար չի կարող տևել:

Կարևոր է նշել, որ ՀՀ-ում ծննդի գրանցումը, այդ թվում՝ վկայականի տրամադրումն անվճար է՝ անկախ այն հանգամանքից, թե այն կատարվել է ծննդից հետո մեկ տարվա ընթացքում, թե դրանից հետո:

ՀՀ-ն երաշխավորում է իր տարածքում տեղի ունեցած բոլոր ծնունդների գրանցումը՝ սահմանելով ծննդյան վայրի ՔԿԱԳ տարածքային մարմնում առանց խտրականության յուրաքանչյուր երեխայի ծննդի պետական գրանցման հնարավորությունը: Բացի այդ, ծննդի գրանցումը կարող է իրականացվել ծնողների (նրանցից մեկի) բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային մարմնում: Եթե երեխան

[28] «Քաղաքացիական կացության ակտեր մասին», ՀՀ օրենք, հոդված 17

[29] «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի հրաման N 97-Ն, Հավելված N 1, կետեր 1, 3

[30] «Քաղաքացիական կացության ակտեր մասին», ՀՀ օրենք, հոդված 6

ծնվել է տրանսպորտային միջոցում՝ ուղերթի ընթացքում, ապա ծննդի պետական գրանցումն իրականացվում է ծնողների (կամ նրանցից մեկի) բնակության վայրի կամ տրանսպորտային միջոցի ուղերթի տարածքում գտնվող որևէ ՔԿԱԳ մարմնում: Մեկ տարեկանից հետո ծննդի գրանցումը կատարվում է միայն երեխայի բնակության վայրի ՔԿԱԳ մարմնի կողմից, իսկ գտնված երեխաների ծննդի գրանցումն իրականցվում է երեխայի գտնելու վայրի կամ նրա բնակության վայրի ՔԿԱԳ մարմնում: [31]

5. ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ծննդի գրանցման կարևորագույն երաշխիքներից է օրենքի այն պահանջը, որ ծննդատնից նորածնի դուրսգրումը իրականացվում է ՔԿԱԳ մարմնում ծննդի պետական գրանցումից հետո, որի մասին պետք է նշում կատարվի նորածնի վարման քարտում՝ նշելով ծննդյան վկայականի համարը, գրանցման վայրը և ժամանակը:[32]

Հատուկ ցուցումների բացակայության պարագայում ծննդատնից առողջ նորածինը դուրս է գրվում հետծննդյան 3-4 օրը, որի ընթացքում էլ, որպես կանոն, իրականացվում է ծննդի գրանցումը:[33]

Այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով ՔԿԱԳ մարմնում ծննդի գրանցումը չի կարող կատարվել, փորձագիտական հարցազրույցների համաձայն՝ բուժհիմնարկից դուրսգրումը կատարվում է սահմանված ժամկետում, իսկ ծննդի չգրանցման մասին գրառում է արվում նորածնի վարման քարտում:[34] Գրանցմանը խոչընդոտող պատճառները տարբեր են, օրինակ՝ եթե ՀՀ քաղաքացին բնակվում է մի շրջանում, իսկ ծննդաբերում է մեկ այլ շրջանում ու ցանկություն ունի ըստ բնակության վայրի գրանցվել, ապա դուրս է գրվում առանց ծննդի գրանցման: Նման դեպքերում բուժհիմնարկը ծննդկանին խնդրում է դուրսգրումից հետո ծննդյան գրանցման վկայականը ներկայացնել բուժհիմնարկին: Որոշ դեպքերում, եթե տևական ժամանակ ծննդականը չի ներկայացվում, ծննդատունը ինքն է զանգահարում,

[31] Նույն տեղում, հոդված 15

[32] «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 3144-Ա , 2012 թ. դեկտեմբերի 28, գլուխ VII, կետ 7

[33] Նույն տեղում, գլուխ VII, կետ 1

[34] Նույն տեղում, գլուխ VII, կետ 8

հետաքրքրվում չներկայացնելու պատճառների մասին: Բժիշկների հավաստմամբ՝ *«90%-ը բերում են, բայց դա պարտադիր չէ»*: Այստեղ պետք է նշել, որ բուժիմնարկները պարտավորություն չունեն դուրսգրումից հետո վերահսկել և հետևել չգրանցված ծնունդների գրանցումը: Օրենքը նաև չի նախատեսում բուժհաստատության կողմից ծննդի չգրանցման մասին արված գրառումները որևէ պատկան մարմնին ուղարկելու պահանջ:

Բժշկական հաստատությունում ծննդաբերության դեպքում տվյալ բուժհաստատությունը տալիս է ծննդյան մասին բժշկական վկայական, որի հիման վրա ՔԿԱԳ մարմնում կատարվում է ծննդի պետական գրանցումը: Բժշկական վկայականում նշվում են տեղեկություններ մոր ինքնության, երեխայի սեռի, ծննդյան վայրի, ժամանակի և այլնի մասին:[35] Վկայականը տրվում է ծնողականին՝ անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, կամ նրա ամուսնուն՝ անձը հաստատող փաստաթուղթ և ծնողականի հետ ամուսնության վկայական ներկայացնելու դեպքում՝ փաստաթղթերը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում: Բժշկական վկայականի կորստի, անընթեռնելի դառնալու կամ գործածության համար այլ կերպ պիտանի չլինելու դեպքում նշված անձինք կարող են դիմել բժշկական վկայականի կրկնօրինակը ստանալու համար, որը տրամադրվում է դիմումը ներկայացնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:[36] Բուժհաստատության կողմից տրվող ծննդի մասին բժշկական վկայականի համար վաղեմության ժամկետ չի սահմանվում:[37]

Չամուսնացած ծնողականի մահվան դեպքում ծննդի մասին բժշկական վկայականը պահվում է այն բժշկական հաստատությունում, որտեղ ծնողաբերել է անձը: Այս պարագայում բժշկական հաստատությունը ինքնուրույնաբար է կազմակերպում ծննդի պետական գրանցումը:[38]

Միայնակ մոր դեպքում նույնպես գործնականում բժշկական հաստատությունն է մոր անունից հայտարարություն տալիս ՔԿԱԳ մարմնին ծննդի գրանցումը

---

[35] «Ծննդի, պերինատալ մահվան և մահվան բժշկական վկայականների ձևանմուշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 14-ի N 1278-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին», ՀՀ Առողջապահության նախարարի հրաման N 15-Ն, 2009 թ. հունիսի 26

[36] «Ծննդի, պերինատալ մահվան և մահվան մասին բժշկական վկայականների տրամադրման ու հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում N 1156 –Ն, 2011թ. օգոստոսի 11

[37] «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 3144-Ա, 2012թ. դեկտեմբերի 28, գլուխ IX, կետ 8

[38] «Ծննդի, պերինատալ մահվան և մահվան մասին բժշկական վկայականների տրամադրման ու հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1156 -Ն որոշում

կազմակերպելու համար, որպեսզի մինչև ծննդատնից դուրս գրվելը ներկայացվի ծննդյան պետական գրանցման վկայականը[39]:

ՀՀ արդարադատության նախարարի N 97-Ն հրամանի 16-րդ կետը նախատեսում է, որ «Մյուս դեպքերում երեխայի ծննդի ակտային գրանցումը ՔԿԱԳ մարմնի կողմից կատարվում է ***բուժհիմնարկի վարչակազմի (որտեղ ծնվել է երեխան) դիմումի***, երեխայի ծննդյան վերաբերյալ բժշկական տեղեկանքի և ոստիկանության համապատասխան տեղեկանքի հիման վրա: Այս դեպքում երեխայի ծննդյան ակտի գրանցման «Հոր մասին տեղեկությունների գրանցման հիմքը» բաժինը չի լրացվում: Այդպիսի երեխայի ծննդի գրանցման մասին ՔԿԱԳ մարմինը եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է ԽՀՄ-ին»: [40] Այս դեպքում, անհասկանալի է, թե որոնք են այդ «մյուս դեպքերը», որոնց ժամանակ հայտարարությունը պետք է տրվի բժշկական հաստատության կողմից: Ներկայացվող փաստաթղթերից, ինչպես նաև՝ ԽՀՄ-ին տեղեկացնելու պարտականությունից կարելի է ենթադրել, որ այստեղ խոսքը հիվանդանոցում ծնողի կողմից երեխայից հրաժարվելու դեպքում ծննդի գրանցման ընթացակարգի մասին է: Հարցազրույցների ընթացքում որևէ փորձագետ չհիշատակեց այս կարգի մասին:

Մոր անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում բժշկական հաստատությունը պարտավոր է դուրսգրումն իրականացնել ծննդկանի լուսանկարը ծննդաբերության պատմության մեջ փակցնելուց և վերջինիս ստորագրությամբ այն վավերացնելուց հետո միայն:[41] Այս ընթացակարգը հարցված փորձագետներից շատ քչերին էր ծանոթ, նման իրավիճակների հետ քչերն են բախվել: Ծննդկանին լուսանկարելու պարտականությունը օրենքով հստակ կարգավորված չէ: Որոշ բժշկական հաստատություններում նշեցին, որ դա կատարվում է իրենց միջոցներով և բուժհաստատության աշխատակիցների վերահսկողությամբ. ***«Սովորաբար ուղարկում են ծննդկանին բուժքրոջ հետ նկարվելու»:*** Որոշ ծննդատներում նշեցին, որ լուսանկար վերցնելու խնդիրը կարգավորում են իրավապահ մարմինները:

Անձը հաստատող փաստաթուղթ չունեցող կնոջ ծննդաբերության մասին բուժհիմնարկը պետք է տեղեկացնի մարզպետարանի, իսկ Երևանում՝

[39] Օրենքով սահմանված չէ նշված կարգը, այն կիրառվում է գործնականում

[40] «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» Արդարադատության նախարարի հրաման N 97-Ն, Հավելված N 1, կետ 16

[41] Նույն տեղում, գլուխ VIII, կետ 3

քաղաքապետարանի երեխաների հարցերով զբաղվող ստորաբաժանմանը: [42] Օրենքը չի մանրամասնում, թե համապատասխան ստորաբաժանումներն ինչ քայլեր են ձեռնարկում ստացված տեղեկությունների հիման վրա:

Անձը հաստատող փաստաթղթի բացակայության մասին ծննդկանը (անհնարինության դեպքում՝ օրինական ներկայացուցիչը) տալիս է գրավոր հայտարարություն՝ նշելով փաստաթղթի բացակայության պատճառը և առանց ծննդի մասին բժշկական վկայականի տրման ծննդկանի դուրս գրման փաստը, ինչը փակցվում է կնոջ ծննդաբերության պատմության մեջ:[43] Նման դեպքերում մոր մասին տեղեկությունները բժշկական փաստաթղթերում լրացվում են նրա բանավոր հայտարարության հիման վրա: Բուժհիմնարկը պարտավոր է այդ տեղեկությունների հավաստիությունը ճշտելու նպատակով դիմել ոստիկանության համապատասխան բաժին:[44] Բուժհաստատություններից մեկում նշեցին. ***«Մենք մորը և երեխային դուրս չենք գրում, մինչև իրավապահ մարմինների համաձայնությունը չի լինում, քանի որ հնարավոր է, որ ծնողը երեխային տանի, ծախի, տանի գցի մի տեղ. երեխան փաստաթուղթ չունի, հետևաբար հեշտ է դա անելը»:*** Բուժհիմնարկի դիմումի հիման վրա ոստիկանությունն իրականացնում է հետազոտություն: Օրենսդրորեն սահմանված չէ, թե ծննդկանի անձի վերաբերյալ ստուգումները ինչ ժամկետներում պետք է կատարվեն, սակայն, ըստ հարցազրույցների, գործնականում երեխայի մոր ինքնությունը պարզելը տևում է մոտավորապես 4-5 օր: Եթե ոստիկանության ստուգումների արդյունքում պարզվում է մոր ինքնությունը, բուժհիմնարկին տրամադրվում է համապատասխան տեղեկանք, որտեղ նշվում է մոր անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, ժամանակը, բնակության վայրը[45]: Ստացված տեղեկության հիման վրա բուժհիմնարկը լրացնում է ծննդի մասին բժշկական տեղեկանքը:

Փորձագիտական հարցազրույցները ցույց են տալիս, որ պրակտիկայում ոստիկանությունը տեղեկանք տրամադրելու փոխարեն կազմակերպում է, որպեսզի կինը ձեռք բերի ժամանակավորապես ինքնությունը հաստատող փաստաթուղթ, որը թույլ է տալիս ՔԿԱԳ մարմնում կատարել ծննդի գրանցումը:

---

[42]«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» որոշում, գլուխ VIII, կետ 5

[43] Նույն տեղում, գլուխ VIII, կետ 4

[44] «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» Արդարադատության նախարարի հրաման N 97- Ն, Հավելված N 1, կետ 16

[45] Նույն տեղում

ՀՀ Առողջապահության նախարարի N 3144-Ն հրամանը սահմանում է, որ ծննդկանի՝ անձը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում բուժհիմնարկը չի տրամադրում ծննդի մասին բժշկական վկայական:[46] Այս դրույթը հակասում է կառավարության N 1156–Ն որոշմանը, համաձայն որի՝ բժշկական վկայականը կարող է տրամադրվել նաև ծննդկանի ամուսնուն՝ համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու դեպքում: Ստացվում է, որ եթե կինը չունի անձը հաստատող փաստաթուղթ, սակայն ոստիկանության կողմից տրված տեղեկությունների հիման վրա հնարավոր է լրացնել ծննդի մասին բժշկական վկայականը, իսկ ամուսինը ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը, ապա վերջինս կարող է բուժհիմնարկից պահանջել և ստանալ ծննդյան մասին բժշկական վկայականը, ինչպես նաև՝ կազմակերպել ՔԿԱԳ մարմնում երեխայի ծննդի գրանցումը:

Եթե ոստիկանության ուսումնասիրությունների արդյունքում մոր մասին տեղեկությունները չեն հայտնաբերվում և հաստատվում, ապա անհայտ անձի ծննդաբերության փաստի վերաբերյալ բուժանձնակազմի կողմից կազմվում է արձանագրություն՝ նորածնի անհատական տվյալների (սեռը, մարմնի զանգվածը և երկարությունը) նկարագրությամբ, որը փակցվում է նորածնի վարման քարտում: Այս դեպքում երեխայի ծննդյան վերաբերյալ բժշկական տեղեկանքում չի նշվում մոր անունը, իսկ ՔԿԱԳ մարմինը ծննդյան ակտի գրանցման ժամանակ ծնողների վերաբերյալ տեղեկությունները չեն լրացնում:[47] Հարց է առաջանում, թե ՔԿԱԳ մարմնում ինչպես է կատարվում ծննդի գրանցումը այս պարագայում, քանի որ մի կողմից վերընշված դրույթը սահմանում է առանց ծնողի ինքնության վերաբերյալ տեղեկությունները լրացնելու ծննդի գրանցման հնարավորության մասին, իսկ մյուս կողմից՝ օրենսդրությամբ չի նախատեսվում նման ծնունդների գրանցման որևէ ընթացակարգ, իսկ ՔԿԱԳ մարմինները անխտիր մերժում են այդպիսի ծնունդների գրանցումը:

Ծննդկանի դուրսգրումից հետո վերջինիս կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից անձը հաստատող փաստաթուղթ ներկայացվելու դեպքում, բուժհիմնարկը տրամադրում է երեխայի ծննդյան մասին բժշկական վկայական՝ անկախ ծննդաբերության վաղեմությունից:[48]

---

[46] «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման N3144-Ա, գլուխ VIII, կետ 1

[47] Նույն տեղում, կետ 16

[48] «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման, գլուխ VII, կետ 7

Բուժհիմնարկից նորածնին դուրս գրելու ժամանակ պարտադիր լրացվում է նորածնի փոխանակման քարտ՝ անկախ ծննդի գրանցման կամ ծննդյան մասին բժշկական վկայական տալու հանգամանքից:[49] Եթե մոր ինքնությունը հաստատող փաստաթղթերը բացակայում են, փոխանակման քարտը լրացվում է մոր բանավոր հայտարարության հիման վրա, որի մասին համապատասխան նշում է կատարվում:[50] Փոխանակման քարտը հիմք է հանդիսանում առողջության առաջնային պահպանման հաստատությունում (պոլիկլինիկա) նորածնի հաշվառման համար:[51] Այսինքն՝ պոլիկլինիկայում հաշվառվում են թե՛ ծննդի գրանցում ունեցող, և թե՛ չունեցող երեխաները, սակայն պոլիկլինիկան պարտավոր չէ վերահսկողություն իրականացնել չգրանցված ծնունդների գրանցման նկատմամբ կամ այդ մասին տեղեկացնել պատկան մարմիններին: Ըստ հարցազրույցների՝ պոլիկլինիկայում երեխայի ընդգրկման համար հիմնականում դիմում են հայրերը, երբ ծննդկանը դեռ հիվանդանոցից դուրս չի գրվել: Պոլիկլինիկայում գրանցելուց հետո փաստաթղթերը (ծննդյան վկայականը, եթե այդպիսին կա և պոլիկլինիկայից տեղեկանքը) ներկայացվում է ծննդատուն, որպեսզի ծննդատանն էլ տեղյակ լինեն, որ երեխան գրանցվել է պոլիկլինիկայում:

Այս առումով փորձագիտական հարցազրույցներից մեկում բուժհիմնարկի աշխատակիցը նշել էր. ***«Եթե կանանց կոնսուլտացիայում չգրանցված հղի է ծննդաբերել, և երեխայի ծնունդը չի գրանցվել, պոլիկլինիկային ամեն դեպքում ուղարկում են փոխանակման քարտ, որպեսզի մանկաբույժն իմանա, որ այդ հասցեով երեխա կա, քանի որ հետծննդյան 40 օրը պոլիկլինիկան է հսկում: Մանկաբույժները պատրոնաժ են իրականացնում, պարտադիր հաճախում են իրենց թաղամասը, եթե հղի են հայտնաբերում, տեղեկացնում են ծննդի գրանցման ընթացակարգի մասին, ուղղորդում են»:***

[49]Նորածնի փոխանակման քարտը փոխանցվում է երեխային սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություն՝ նորածնի ծնողի/հարազատի կամ բուժհաստատության աշխատակցի միջոցով, ինչի վերաբերյալ կատարվում է գրառում նորածնի վարման քարտում: Տես՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման, գլուխ VII, կետ 6

[50] «Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» Արդարադատության նախարարի հրաման N 97-Ն, Հավելված N 1, կետ 16

[51]ՀՀ Առողջապահության նախարարի N 3105-Ա հրաման «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բուժօգնության կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին», 2012թ. դեկտեմբերի 28

6. ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Բժշկական հաստատությունից դուրս, առանց բժշկական օգնության ծննդի և ծննդից հետո **անմիջապես հոսպիտալացվելու դեպքում** բժշկական վկայականը տրվում է այն բժշկական հաստատության կողմից, որտեղ տեղի է ունեցել հոսպիտալացումը[52]:

Եթե անմիջապես չի կատարվել հոսպիտալացումը, այլ մայրը, օրինակ, շաբաթներ անց է որոշել դիմել բուժհաստատություն, ծննդի մասին բժշկական վկայական չի կարող տրվել բուժհաստատության կողմից: Նման դեպքերում, եթե բացակայում են անձինք, ովքեր կարող են ՔԿԱԳ մարմնում վկայություն տալ տվյալ մորից երեխայի ծնվելու մասին, ծննդի գրանցումը կատարվում է դատարանի վճռի հիման վրա: ԸԿԵԻՊԲ աշխատակիցը նշում է, որ ***«Որպես կանոն, եթե անձը երեխային ունենում է՝ հետագայում նրան շահագործելու նպատակներով, նման մայրերը հիվանդանոցում չեն ծննդաբերում»:***

Բժշկական հաստատությունից դուրս ծննդաբերության դեպքում ծննդի մասին բժշկական վկայականը տրվում է այն բժշկական հաստատության կողմից, որի **բուժաշխատողը ցուցաբերել է բուժօգնություն** ծննդաբերության ժամանակ (կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող բժշկի կողմից)[53]:

Ըստ հարցազրույցների՝ ծննդատնից դուրս կարող է ծնունդն ընդունել շտապօգնության բժիշկը, որը երեխային ու մորը տեղափոխում է ծննդատուն: Այս պարագայում կնոջն ընդունում են բաժանմունք, կատարում են համապատասխան ստուգումներ, որից հետո տրվում է ծննդի մասին բժշկական տեղեկանք՝ հետծննդաբերական հոսպիտալացման կարգով: ***«Տեղեկանքում միանշանակ չի գրվում, թե երեխան որտեղ է ծնվել: Այնտեղ ընդգծելու տեղեր կան, օրինակ՝ տանը, բժշկական հաստատությունում, տրանսպորտային միջոցում, փողոցում, բայց կոնկրետ հասցեն չի լրացվում»:***

Եթե ծնունդը տեղի է ունեցել բժշկական հաստատությունից դուրս՝ **առանց բժշկական օգնության և հետծննդաբերական հոսպիտալացում չի կատարվել**, ծննդի մասին վկայականի փոխարեն ծննդի գրանցման հիմք է հանդիսանում երեխայի առողջության ու կենդանության մասին տեղեկանքը, որը տրամադրվում է երեխային սպասարկող առողջության առաջնային պահպանման հաստատության կողմից

[52] «Ծննդի, պերինատալ մահվան և մահվան մասին բժշկական վկայականների տրամադրման ու հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N1156-Ն որոշում, Հավելված N 1, կետ3
[53] Նույն տեղում, կետ 2

(պոլիկլինիկա)[54]: Այսպիսի ծնունդների դեպքում ՔԿԱԳ մարմին պետք է ներկայացվի նաև ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարություն՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված 1-2 անձի (անձանց) կողմից: Վկաների անձնական տվյալները լրացվում են անձը հաստատող փաստաթղթերի հիման վրա: Եթե հայտարարություն տված անձը չի կարող անձամբ ներկայանալ ՔԿԱԳ մարմին, հայտարարության տակ դրված նրա ստորագրությունը պետք է հաստատվի նոտարական կարգով[55]:

Օրենսդրորեն ուղղակիորեն սահմանված չէ, թե երեխայի ծննդյան վայրը ինչ կարգով է լրացվում երեխայի՝ տանը ծնվելու այն դեպքերում, երբ բացակայում է ծննդի մասին բժշկական վկայականը: Վերևում ներկայացված ծննդի պետական գրանցման ընթացակարգից կարելի է ենթադրել, որ այսպիսի իրավիճակներում ծննդյան վայրը պետք է հաստատվի վկաների կողմից տրվող հայտարարությամբ:

Օրենսդրությամբ չի սահմանվում երեխայի առողջության և կենդանության մասին տեղեկանքի տրման կարգը և տեղեկանքի ձևանմուշը: Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ նման տեղեկանքները պոլիկլինիկաները տալիս են ՔԿԱԳ մարմնի հարցման հիման վրա, որի համար անհրաժեշտ է նախ երեխային հաշվառել պոլիկլինիկայում: Ծննդի գրանցում չունեցող երեխաների հաշվառումը իրականցվում է փոխանակման քարտի, իսկ տնային ծնունդների դեպքում՝ ծնողների անձը հաստատող փաստաթղթի կամ ծնող(ներ)ի փաստացի բնակության մասին բավարար հիմքերի (տեղեկանք բնակության վայրից, պատրոնաժ բուժքրոջ վկայություն տվյալ տարածքում բնակության մասին) կամ Ընտանիքի, կանանց և երեխայի մարզային վարչության կամ այլ իրավասու կազմակերպության միջնորդագրի հիման վրա:[56]

7. ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը իրականացվում է

---

[54] «Ծննդի, պերինատալ մահվան և մահվան մասին բժշկական վկայականների տրամադրման ու հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N1156-Ն, Հավելված N 1, կետ4

[55] «Քաղաքացիական կացության ակտեր մասին» ՀՀ օրենք, հոդված 14

[56]«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բուժօգնության կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին», ՀՀ Առողջապահության նախարարի հրաման N 3105-Ա, 2012 թ. դեկտեմբերի 28

բացառապես խնամակալության և հոգաբարձության մարմինների (ԽՀՄ) կողմից: Երեխան համարվում է առանց ծնողական խնամքի մնացած ծնողների մահվան, ծնողական իրավունքներից զրկվելու/սահմանափակելու, ծնողների անգործունակ ճանաչվելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ բժշկական կազմակերպություններից երեխային վերցնելուց հրաժարվելու), ինչպես նաև՝ ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում:[57]

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտման պարտականություն կրում են խնամակալության և հոգաբարձության մարմինները, որոնք վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը[58]:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններ են հանդիսանում համայնքների ղեկավարները,[59] որոնց կից գործում են Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ (ԽՀՀ):[60] Խնամակալության և հոգաբարձության մարմիններն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտման կապակցությամբ համագործակցում են տարբեր հիմնարկների (նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ կազմակերպությունների) հետ, որոնց պաշտոնատար անձինք այդպիսի երեխաների մասին տեղեկություններ ունենալու դեպքում պարտավոր են հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ ըստ երեխայի փաստացի գտնվելու վայրի:[61] Ծնողական խնամքի բացակայության մասին տեղեկություն ստանալու պահից երեք օրվա ընթացքում ԽՀՄ-ն պարտավոր է այդ տեղեկություններն ուղարկել մարզպետարան՝ հաշվառում իրականացնելու նպատակով, և անցկացնել երեխայի կյանքի պայմանների հետազոտություն: Երեխայի ծնողների կամ ազգականների կողմից խնամքի փաստի բացակայություն գտնելու դեպքում ԽՀՄ-ն ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը:[62] Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները դաստիարակության համար ենթակա են հանձնման ընտանիք (որդեգրման), խնամակալության (հոգաբարձության) կամ

---

[57] ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 2004 թ. նոյեմբերի 9, հոդված 109

[58] Նույն տեղում

[59] Երևանում քաղաքապետի անունից խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորություններն իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները

[60] «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 164-Ն, 2011թ. փետրվարի 24

[61] ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 110

[62] Նույն տեղում

խնամատար ընտանիք, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար բոլոր տիպի կազմակերպություններ (դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններ):[63] Խնամքի հաստատություն երեխայի տեղավորման գործընթացը որոշ դեպքերում տևում է մինչև երկու ամիս:

Եթե ծնողը(ները) հրաժարվում են երեխայից հենց ծննդատանը, ապա այս կապակցությամբ բուժհիմնարկում լրացվում է հատուկ տեղեկանքի ձև: Մինչև երեխայի տեղավորման կամ խնամքի հանձնելու հարցի լուծումը երեխան մնում է ծննդատան մանկական բաժանմունքում, որտեղ նրան ապահովում են սննդով, հագուստով, խնամքով:

Համայնքի ղեկավարը, հանդիսանալով ԽՀՄ, միաժամանակ միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ և լիազորված է օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալ երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն:[64] Օրենքը չի նախատեսում, թե համայնքի ղեկավարը ինչ կարգով է իրականացվում այդ բացահայտումները:

Համայնքի ղեկավարի դերը ծննդի գրանցման հարցում առաջին անգամ սահմանվել է 2010 թվականին՝ տեղական ինքնակառավարման մարմինների մասին ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որը նաև արտացոլված է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների օրինակելի կանոնադրությունում: Սակայն հետազոտության ընթացքում որոշ ՏԻՄ–երում նշում էին, որ ***«Մենք կապ չունենք, ծննդի գրանցման հետ երբևիցե չենք առնչվել»***:

Համայնքի ղեկավարը մարզպետարանի ԸԿԵԻՊԲ-ին տեղեկացնում է չգրանցված ծնունդների բացահայտված դեպքերի, և դրանց գրանցման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին՝ հաշվառում իրականացնելու նպատակով:[65] Միաժամանակ մարզպետարանների ԸԿԵԻՊԲ-ները աջակցում են համայնքներին և մյուս պատկան մարմիններին չգրանցված ծնունդների հայտնաբերման և գրանցման կազմակերպման հարցերում՝ ուղղորդելու և խորհրդատվություն տալու միջոցով: Համաձայն հարցազրույցների՝ ծնունդը չգրանցված երեխաների մասին համապարփակ տեղեկություն ձեռք բերելու համար ԸԿԵԻՊԲ–ները փորձում են

[63] Նույն տեղում, հոդված 111

[64] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002 թ. մայիսի 7, հոդված 33

[65]«Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ՀՀ կառավարության որոշում N 164-Ն, 2011թ. փետրվարի 24

համայնքներից, դպրոցներից տարեկան երկու անգամ ստանալ տեղեկություն ծննդի գրանցում չունեցող երեխաների մասին: ԸԿԵԻՊԲ–ները համագործակցում են նաև ՔԿԱԳ տարածքային բաժինների հետ, տեղեկանալու համար գրանցված ծնունդների ընդհանուր թվի մասին և թե դրանցից քանիսն է իրականացվել ժամկետի բացթողնմամբ:

Հարցազրույցների ընթացքում պարզվեց, որ Լոռու մարզում 2007 թվականի դրությամբ 64 չգրանցված ծնունդ է եղել, իսկ ներկա պահին միայն այդպիսի 2 դեպք է մնացել, ընդ որում՝ երկու դեպքում էլ ծնունդը տեղի է ունեցել արտերկրում: Ծնունդների գրանցումը կազմակերպելու համար Լոռու մարզի ԸԿԵԻՊԲ-ն տարածքային կառավարման նախարարության հրամանով աշխատել է համայնքների հետ, և արդյունքում 62 երեխա ստացել է ծննդյան վկայական:

Արագածոտնի մարզում 2006թ. բացահայտել են 158 ծննդի գրանցում չունեցող երեխա: Պարզվել է նաև, որ մարզի դպրոցներում 100-ից ավելի երեխա ծննդի գրանցում չի ունեցել: Այս կապակցությամբ Արագածոտնի մարզի ԸԿԵԻՊԲ-ն նախաձեռնել է մարզում իրազեկման բարձրացման ծրագիր, որի շրջանակներում օրենքի դրույթները պարզեցված շարադրվել և բաժանվել են բոլոր համայնքներին:

Մի շարք ինստիտուցիոնալ խնդիրներ են արձանագրվել ԽՀՄ-ին կից գործող հանձնաժողովների աշխատանքում: Նախ ԽՀՀ–ները գործում են հասարակական հիմունքներով, որի արդյունքում հանձնաժողովի անդամները շահագրգռված չեն իրենց աշխատանքը պատշաճ և արդյունավետ ձևով կատարել:

ԽՀՀ անդամները որպես կանոն հանդիսանում են տվյալ ՏԻՄ-ի կամ մարզպետարանների ԸԿԵԻՊԲ-ի աշխատակիցները, ովքեր ունեն հիմնական աշխատանք: ԽՀՀ գործառույթները լիարժեք իրականացնելու համար հանձնաժողովի անդամը պետք է օգտագործի իր ոչ աշխատանքային ժամերը, երեկոյան ժամերը կամ հանգստյան օրերը: Որոշ համայնքներում ԽՀՀ–ն ապահովված չէ անգամ գրասենյակով, համակարգչով՝ համապատասխան մուտքագրումները կատարելու համար: ***«Եթե մենք խնամակալության հանձնաժողովները իրապես բերենք նորմալ վիճակի, մենք ընդհանրապես կունենանք երեխաների պաշտպանություն, ոչ միայն ծննդի գրանցման հետ կապված հարցերում: Ծնունդների գրանցումն ածանցյալ է իրական պրոբլեմից: Պրոբլեմն այն է, որ պետք է ունենանք լուրջ ԽՀՄ, լուրջ մասնագետներով և վճարովի հաստիքով, մեծացնենք նրա լիազորությունների շրջանակները, ներդնենք համապատասխան մեխանիզմներ այդ լիազորությունների իրականացման համար և դրանից հետո պահանջենք»,*** նշում է ԽՀՀ ներկայացուցիչը:

Խնդրահարույց է նաև այն, որ ԽՀՀ–ներում ներառվում են անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն և հմտություններ չունեցող անձինք: Եթե

մեծ համայնքներում հնարավոր է հանձնաժողովում ապահովել երեխաների իրավունքների և սոցիալական պաշտպանության հարցերի շուրջ իրազեկ մասնագետների մասնակցությունը, ապա փոքր համայնքներում դա գրեթե անհնար է: Արդյունքում, ԽՀՀ–ներում ընդգրկվում են ոչ իրազեկ մարդիկ, որոնք երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պատասխանատու որոշումներ են ընդունում. *«Օրինակ, որ դրսից, ասենք, աղբամանից մի երեխա գտնեն, բերեն, չեմ կարող ասել՝ ինչ պետք է անել»,* նշում է ԽՀՀ անդամներից մեկը:

Այսպիսի իրավիճակում համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությունը ձեռք է բերում ձևական բնույթ, ինչը հանգեցնում է երեխաների իրավունքների թերի պաշտպանությանը:

7.1. ԳՏՆՎԱԾ (ԸՆԿԵՑԻԿ) ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Գտնված երեխաներն առանց ծնողական խնամքի մնացած այն երեխաներն են, ում ծնողների ինքնությունը անհայտ է:

Գտնված երեխաների դեպքում երեխային գտած անձը պարտավոր է այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել երեխային գտնելու վայրի ԽՀՄ կամ ոստիկանություն:[66]

Երեխային գտնելուց 7 օրվա ընթացքում ոստիկանությունը, ԽՀՄ-ն, դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպությունները պարտավոր են հայտարարել գտնված երեխայի ծննդի պետական գրանցման մասին:[67]

Գտնված երեխայի ծննդի պետական գրանցման հայտարարության հետ պետք է ներկայացվեն՝

ա) երեխային հայտնաբերելու մասին փաստաթուղթ՝ տրված ոստիկանության կամ ԽՀՄ-ի կողմից՝ նշելով երեխային հայտնաբերելու ժամանակը, տեղը և հանգամանքները,

բ) երեխայի տարիքն ու սեռը հաստատող փաստաթուղթ՝ տրված բժշկական կազմակերպության կողմից:[68]

---

[66] «Քաղաքացիական կացության ակտեր մասին» ՀՀ օրենք, հոդված 19
[67] Նույն տեղում
[68] Նույն տեղում

Այն դեպքերում, երբ անհնար է պարզել երեխայի ծննդյան ժամանակը, երեխայի տարիքը որոշելու համար, կազմվում է հանձնաժողով[69], որը սահմանում և հրապարակում է երեխայի տարիքը[70]: Նշենք, որ հանձնաժողովը եզրակացություն է տալիս ոչ միայն գտնված երեխաների, այլև՝ երեխայի ծննդյան ժամանակը անհայտ լինելու այլ դեպքերում:[71] Հանձնաժողովին կարող են դիմել երեխայի ծնողը (ծնողները), խնամակալության և հոգաբարձության մարմինը, ոստիկանությունը, կրթական և առողջապահական, սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ մարմիններ[72]: Դիմումի քննարկման հիման վրա հանձնաժողովը տալիս է եզրակացություն երեխայի տարիքը որոշելու մասին, որը հիմք է հանդիսանում բժշկական կազմակերպության կողմից երեխայի ծննդյան ժամանակը գրառելու և ծննդյան մասին բժշկական տեղեկանք տալու համար:

Գտնված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան մասին տեղեկությունները ծննդի ակտի գրառման մեջ լրացվում են ոստիկանության կամ ԽՀՄ-ի ցուցումով, իսկ ծնողների մասին տեղեկությունները չեն լրացվում:[73]

Ըստ հարցազրույցների՝ գտնված երեխաների դեպքում ոստիկանությունը դիմում է ԽՀՄ և ԸԿԵԻՊԲ: Նման դեպքերում առաջին հերթին ոստիկանությունում արձանագրվում է երեխային գտնելու փաստը, կազմվում է համապատասխան ակտ և երեխային ուղարկում են բուժհաստատություն զննումների: Ոստիկանության տեսուչը 3-6 ամիսների ընթացքում կատարում է հարցումներ, փնտրում է վկաներ, ովքեր փաստում են, որ երեխան գտնված է: Գտնված երեխաների վերաբերյալ ոստիկանությունը հարցում է կատարում նաև ծննդատներ: Այնուհետև

---

[69] Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը և լիազորությունները սահմանվում են «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի n 995-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 18–Ն որոշմամբ, 2011թ. հունվարի 20, Հավելված N 1

[70] Տարիքի սահմանման չափանիշները հետևյալն են. եթե համաձայն եզրակացության երեխան ծնվել է տարվա առաջին կեսին՝ առանց նշելու ամիսը և ամսաթիվը, ապա ծննդյան ակտի գրանցման մեջ ծննդյան ժամանակ է նշվում տվյալ տարվա ապրիլի 1-ը, եթե նշված է տարվա երկրորդ կեսը՝ համապատասխանաբար նույն տարվա հոկտեմբերի 1-ը: Եթե հանձնաժողովի եզրակացության մեջ նշված է միայն երեխայի ծննդյան տարեթիվը՝ առանց նշելու ամիսը, ամսաթիվը, ապա ծննդյան ակտի գրանցման մեջ ծննդյան ամիս և ամսաթիվ է նշվում տվյալ տարվա հուլիսի 1-ը: Իսկ եթե հանձնաժողովի եզրակացության մեջ նշված են տարեթիվը և ամիսը՝ առանց ամսաթվի, ապա ծննդյան ակտի գրանցման մեջ ծննդյան ամսաթիվ է նշվում համապատասխան ամսվա 15-ը:

[71] Օրինակ՝ բժշկական կազմակերպությունում բացակայում են ծննդյան ժամանակի մասին տեղեկությունները, այդ տեղեկությունները կորսվել են, երեխան ծնվել է բժշկական հաստատությունից դուրս և չկան վկաներ, գտնված երեխաների ծննդի գրանցման կամ այլ դեպքերում

[72] «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N995-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում, Հավելված N 1, կետ 12

[73] «Քաղաքացիական կացության ակտեր մասին» ՀՀ օրենք, հոդված 19

վկայությունների հիման վրա կազմվում է արձանագրություն և, երեխային ճանաչելով առանց ծնողների խնամքի մնացած անձ՝ ԽՀՄ-ն նրան ուղղորդում է համապատասխան հաստատություն (մանկատուն, բուժհաստատություն, ՀՕՖ)։ Ծննդի գրանցումն արդեն իրականացվում է տվյալ հաստատության կողմից։

Օրենսդրորեն ուղղակիորեն սահմանված չէ, թե երեխայի ծննդյան վայրը ինչ կարգով է լրացվում ծննդի գրանցման ակտում այն դեպքերում, երբ երեխան գտնված է և բացակայում է ծննդի մասին բժշկական վկայականը։ Իրավական մյուս կարգավորումներից կարելի է ենթադրել, որ այսպիսի դեպքերում ոստիկանության կողմից տրվող՝ երեխային հայտնաբերելու մասին փաստաթղթում նշված երեխային գտնելու վայրն էլ հենց գրառվում է որպես նրա ծննդյան վայր։

7.2. ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Օրենսդրության համաձայն՝ երեխայի ծննդի գրանցման համար ՔԿԱԳ մարմնին կարող է հայտարարություն տալ նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքն իրականացնող հաստատությունը կամ անհատը՝ որպես շահագրգիռ անձ։

Սովորաբար հաստատություններում երեխային ընդունելուց առաջ փաստաթղթերի հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են։ Այս կապակցությամբ մանկատներից մեկի աշխատակիցը նշեց. ***«Մենք ընդհանրապես ծննդի գրանցման հետ կապված խնդիրներ չենք ունեցել, որովհետև երեխաները ընդունվել են արդեն ծննդի գրանցմամբ, փաստաթղթերը նախապես պատրաստվել են, անձնական գործի և այլնի հետ»։***

Եթե պարզվում է, որ երեխայի ծնունդը գրանցված չէ, գրանցման հարցով զբաղվում է հաստատության իրավաբանը, ով կազմակերպում է ծննդի գրանցման գործընթացը՝ փաստաթղթերն է հավաքագրում, տվյալները ճշտում, ՔԿԱԳ դիմում ներկայացնում, գործընթացին հետևում, հարկ եղած դեպքում՝ դատական գործընթացին մասնակցում։

Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու համար խնամք իրականացնող հաստատությունները համագործակցում են ոստիկանության, ծննդատների, պոլիկլինիկաների, տեղական մարմինների, ՔԿԱԳ մարմինների, Արդարադատության նախարարության և այլ մարմինների հետ։ Մանկատներում նշեցին, որ եթե երեխաների փաստաթղթերի հետ որևէ խնդիր են

ունենում, ապա, որպես կանոն, 10 օրում բոլոր փաստաթղթերը կարողանում են կարգավորել հարցումների միջոցով:

Որոշ դեպքերում տեղեկություններ ձեռք բերելու կամ ճշտելու համար հաստատությունները դիմում են նաև Ազգային արխիվ, քանի որ ՀՀ Արդարադատության նախարարությանը դիմելը ժամանակատար է. գրությունը պետք է հասնի նախարարություն, քննարկվի, ուղարկվի տարածքային ՔԿԱԳ և պատասխանը վերադառնա հաստատություն, ինչը տևում է մոտ մեկ-մեկուկես ամիս:

Կան դեպքեր, երբ երեխան միանգամից հայտնվում է մանկատանը կամ խնամք իրականացնող այլ հաստատությունում և այս դեպքում հաստատությունն է երեխայի տվյալները ներկայացնում ոստիկանությանը. համագործակցելով ոստիկանության հետ՝ ճշտում են փաստաթղթերի առկայությունը, երեխայի, նրա ծնողների ինքնության մասին տվյալներ և այլն:

Պրակտիկայում, փորձագետների համոզմամբ, խնամք իրականացնող հաստատությունները հետևողական են ծննդի գրանցման հարցում: Օրինակ՝ Զատիկ մանկատանը, որը հանդիսանում է երեխաների շուրջօրյա ժամանակավոր խնամքի կենտրոն և որտեղ երեխաները տեղավորվում են 6 ամիս ժամկետով, ծննդի գրանցման հետ կապված հարցերը փորձում են լուծել 6 ամսվա ընթացքում. ***«Եթե երեխան հաստատությունում է հայտնվել առանց ծննդականի, ապա մենք զբաղվում ենք ծննդական ստանալու գործերով, և մեր հաստատությունից դուրս գալուց արդեն երեխան պետք է ունենա այդ փաստաթուղթը»***:

8. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՅԼ ԵՐԿՐՈՒՄ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Օտարերկրյա պետություններում ապրող ՀՀ քաղաքացիների ՔԿԱ-երի, այդ թվում՝ ծննդի գրանցումները իրականացվում են տվյալ պետությունում գտնվող ՀՀ հյուպատոսական հիմնարկների կողմից:[74]

Սակայն եթե երեխայի ծնունդը տվյալ երկրում չի գրանցվել, և ՀՀ քաղաքացին ետ է վերադարձել Հայաստանի հանրապետություն, ապա այդ երկրից բերված ծննդյան մասին բժշկական փաստաթղթի հիման վրա ՀՀ–ում կատարվում է ծննդի գրանցումը՝ երեխայի ծնողի (ծնողներից մեկի) բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային մարմնում: Կան երկրներ, որ բժշկական վկայական տրամադրելու փոխարեն ծնողների

[74] «Քաղաքացիական կացության ակտեր մասին» ՀՀ օրենք, հոդված 4

անձնագրի մեջ ներդիրներ են կցում՝ օրինակ ԱՄՆ-ն, որի հիման վրա ՀՀ-ում կատարվում է ծննդի գրանցումը: *«Մի անգամ ԱՄՆ–ից վերադարձած ծնողների անձնագրի մեջ ներդիր չկար, բայց լուսանկարել էին երեխաներին և նկարները փակցրել էին ծնողների անձնագրի մեջ: Դա իրենց երկրի որոշումն էր, որը մեզ համար լիարժեք հիմք էր»,* նշում է ՔԿԱԳ մարմնի աշխատակիցը:

Օրենսդրությունը չի պահանջում օտարերկրյա պետությունների կողմից ՀՀ քաղաքացիներին տրված փաստաթղթերի նոտարական թարգմանություն կամ հյուպատոսական օրինականացում, սակայն օտարալեզու փաստաթղթերի հետ կարող են խնդիրներ առաջանալ. *«Երբեմն բերում են փաստաթուղթ, որտեղ գրված է այդ երկրի լեզվով և թարգմանության ժամանակ տառադարձության խնդիր է լինում, հաճախ մի փաստաթուղթը մի ձևով է թարգմանվում, մյուսը՝ մեկ այլ ձևով: Լինում են հակասություններ ոչ միայն անունների, այլև՝ ծննդավայրի անվանումների հետ և անձնագրավորման ժամանակ խնդիրներ են առաջանում»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 169[1] հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում ՔԿԱԳ մարմնին սուտ տեղեկություններ հաղորդելու համար[75]՝ ՔԿԱԳ մարմնի ղեկավարը և գրանցումն իրականացնող աշխատակիցը պատասխանատվություն են կրում ՔԿԱ-երի պետական գրանցման ճշտության համար[76]: Այս կապակցությամբ արտերկրում ծնված երեխաների ծնունդը ՀՀ–ում գրանցելիս ՔԿԱԳ մարմինները հարցում են կատարում երեխայի ծննդյան երկիր, տվյալներ ձեռք բերելու և ճշտելու համար, ինչպես նաև պարզելու, թե տվյալ պետության տարածքում արդյո՞ք ծնունդն արդեն գրանցվել է, թե՞ ոչ: Գրանցված չլինելու դեպքում միայն ՔԿԱԳ մարմինը իրականացնում է ծննդի գրանցում: Օրենքը, սակայն, չի սահմանում արտերկրում ծնված երեխաների ծննդի գրանցման նման նախապայման: Հարցման պատասխանը հաճախ երկար տարիներ չի ստացվում: Պրակտիկայում նման դեպքերում կամ իրականացվում է կրկնակի հարցում, կամ ծնողին ուղղորդում են վերադառնալ այդ երկիր և անձամբ ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթերը գործընթացը արագացնելու համար, կամ էլ որևէ քայլ չի ձեռնարկվում, և միակ տարբերակը մնում է դատական կարգով ծննդի գրանցումը[77]: Դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես խնդրահարույց է

[75] Այս արարքի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ տեղեկությունները տրամադրելիս անձը պետք է տեղյակ լինի, որ դրանք սուտ են:

[76] «Քաղաքացիական կացության ակտեր մասին» ՀՀ օրենք, հոդված 6

[77] Չնայած դատարանը նույնպես, ըստ հարցվածների, հարցում պետք է կատարի օտարերկրյա համապատասխան մարմիններ

Վրաստան կատարված հարցումների պատասխանները ստանալը, որը կարող է տարիներ տևել:[78]

9. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, ապաստան հայցողների և փախստականների համար ծննդի գրանցման հատուկ կարգ չի սահմանվում: Համաձայն ՀՀ ՔԿԱ-երի մասին օրենքի 7-րդ հոդվածի՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց այն փաստաթղթերը, որ տրվել են օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից և ներկայացվել են ծննդի պետական գրանցում իրականացնելու համար, պետք է ենթարկվեն հյուպատոսական օրինականացման և նոտարական թարգմանության: Միջազգային պայմանագրերով ՀՀ-ում հյուպատոսական օրինականացման պահանջից ազատված են ԱՊՀ երկրների (բացառությամբ Ադրբեջանի), ինչպես նաև՝ Բուլղարիայի և Լիտվայի իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերը:[79]

Հայաստանում փախստականները և ապաստան հայցողներն ունեն ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հավասար իրավունքներ և պարտականություններ, և օրենքը նրանց չի ազատում հյուպատոսական օրինականացման և նոտարական թարգմանության պահանջից:[80]

Այսինքն, եթե օտարերկրյա քաղաքացիների, ապաքաղաքացիների, փախստականների և ապաստան հայցողների ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջին (ներկայացվող փաստաթուղթը ապոստիլով վավերացված չէ կամ նոտարական թարգմանություն չկա) ՔԿԱԳ մարմինը մերժում է ծննդի գրանցումը: Այս պահանջը վերաբերում է թե՛ անձը և քաղաքացիական կացության կարգավիճակը հաստատող փաստաթղթերին, և թե՛ տվյալ պետության կողմից տրված ծննդի մասին բժշկական տեղեկանքին:

---

[78] Տես հավելվածում

[79] Ապոստիլ չի դրվում Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիային (Մինսկի կոնվենցիա) միացած ԱՊՀ երկրների (Բելառուս, Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ղազախստան, Ղրղստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան), ինչպես նաև՝ այն փաստաթղթերի վրա, որոնք ուղարկվում կամ ստացվում են Բուլղարիայից, Լիտվայից

[80] «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, 2008 թ. նոյեմբերի 27, հոդված 15

Ծնունդը գրանցվում է ըստ երեխայի ծննդավայրի:[81] Եթե երեխայի 2 ծնողներն էլ օտարերկրյա քաղաքացիներ են, իսկ երեխան ծնվել է ՀՀ-ում, ծնունդը կարող է գրանցվել ծննդի փաստացի վայրում գտնվող ՔԿԱԳ մարմնում: Միևնույն ժամանակ ծնողները, որոնք հանդիսանում են այլ երկրի քաղաքացիներ, կարող են դիմել իրենց դեսպանատուն և այնտեղից ստանալ այդ երկրի ծննդական:

Ինչ վերաբերում է փախստականներին (մասնավորապես՝ Լիբանանի քաղաքացիներ, սիրիահայեր), ապա նրանք կարող են դիմել ՀՀ առողջապահության նախարարություն, ներկայացնել պետական պատվերի ուղեգիր և անվճար սպասարկվել թե՛ կանանց կոնսուլտացիայում, և թե՛ ծննդատանը, այն դեպքում, երբ անվճար կոնսուլտացիան և ծննդօգնությունը նախատեսված է միայն ՀՀ քաղաքացիների համար: Նշենք, որ ըստ հարցազրույցների՝ սիրիահայերի հետ կապված ՔԿԱԳ–ները հատուկ հրաման ունեն Արդարադատության և Սփյուռքի նախարարություններից՝ հնարավորինս հեշտացնել բոլոր գործընթացները և որևիցե փաստաթղթային խոչընդոտներ չստեղծել: Առողջապահության և Սփյուռքի նախարարությունների ջանքերով այդ հարցը արագ լուծում է ստացել:

Սիրիահայերի հարցում բացառություն է արվում, որովհետև հնարավոր է, որ ոչ մի փաստաթուղթ չունենան, չնայած հիմնականում ունենում են ընտանիքի գիրք, որտեղ բոլոր անդամները նշված են լինում: ՀՀ նախագահի հատուկ հրամանի համաձայն՝ նրանց անառարկելիորեն միանգամից անձնագրավորում են: Եթե ընտանիքի գիրքը չունեն կամ երեխան նորածին է և դեռ գրանցված չէ, ապա դիմում են հյուպատոսին, ստանում են հատուկ փաստաթուղթ, որի հիման վրա գրանցում են և անձնագրավորում: Բայց սիրիահայերը բացառություն են. ***«Եթե այդ մարդը փախստականի վկայական ունի և վերևից ցուցում ունենք, խնդիր չի»:***

10. ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիայով երաշխավորված յուրաքանչյուր իրավունքի, այդ թվում՝ ծննդից անմիջապես հետո գրանցվելու իրավունքի իրացումը պետք է պայմանավորված չլինի երեխայի կամ նրա ծնողների կարգավիճակով: Այս առումով ՀՀ-ում գրանցման հետ կապված խնդիրներ առաջանում են այն դեպքերում, երբ երեխայի ծնողները,

[81] «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 15

մասնավորապես մայրը, չունի անձը հաստատող փաստաթուղթ: Քաղաքացիական կացության ակտերի մասին ՀՀ օրենքի 17 հոդվածը սահմանում է, որ ծննդի գրանցման ակտում մոր մասին տեղեկությունները լրացվում են երեխայի ծննդի մասին բժշկական փաստաթղթի հիման վրա: Բժշկական հաստատությունն իր հերթին ծննդի մասին բժշկական փաստաթուղթը լրացնում է ծննդկանի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա և չի կարող տրամադրել բժշկական փաստաթուղթը, եթե ծննդկանը անձը հաստատող փաստաթուղթ չի ներկայացնում:[82]

Անձը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում ՔԿԱ-երի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ուժով գրանցումն իրականացնող մարմինը միանշանակ մերժում է ծննդի գրանցումը, քանի որ ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն և, հետևաբար, չեն համապատասխանում օրենքի պահանջներին:

Այս իմաստով տանը ծնված երեխաները գտնվում են առավել անբարենպաստ վիճակում, քանի որ ծննդատանը երեխայի ծննդի փաստը գրառվում է անկախ մոր՝ անձը հաստատող փաստաթղթերի առկայության, իսկ տնային ծնունդների դեպքում երեխայի ծննդի փաստը ընդհանրապես որևէ տեղ չի նշվում:

Ի տարբերություն մոր փաստաթղթերի բացակայության՝ երեխայի հոր փաստաթղթերի բացակայությունը ծննդի գրանցման համար խոչընդոտներ չի առաջացնում, քանի որ հոր մասին տեղեկությունները կարող են չլրացվել, ինչը չի խոչընդոտում ծննդի գրանցմանը:[83]

Եթե ծնողը կորցրել է անձը հաստատող փաստաթուղթը կամ անցել է դրա վաղեմության ժամկետը, նա պետք է դիմի ՀՀ Ոստիկանության անձնագրային բաժին՝ երկարացնելու վավերականության ժամկետը, նոր փաստաթուղթ ձեռք բերելու կամ ժամանակավորապես անձնագրին փոխարինող ձև ձեռք բերելու համար: Որպես կանոն, անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված խնդիրներ ունենում են տեղաշարժվող ընտանիքները:

Նման իրավիճակում, երբ օրենսդրությամբ սահմանված չեն անձի ինքնության հաստատման այլ մեխանիզմներ, քան անձը հաստատող փաստաթղթերի ներկայացումն է, տարբեր պատճառներով փաստաթղթեր չունեցող ծնողների երեխաները հայտնվում են բարձր ռիսկային գոտում:

---

[82]«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի N 3144-Ա հրաման, գլուխ VIII, կետ 1

[82] Նույն տեղում, գլուխ VIII, կետ 3

[83] «Քաղաքացիական կացության ակտեր մասին» ՀՀ օրենք, հոդված 17

Այս կապակցությամբ առավել արդյունավետ է համարվում վկաների հայտարարության (sworn statement) կամ այլ փաստաթղթերի հիման վրա անձի ինքնության մասին գրառում իրականացնելը:

Համաձայն ՄԱԿ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին օրինակելի օրինագծի 48-րդ հոդվածի՝ գրանցումն իրականացնող մարմնում գրանցման ենթակա դեպքի կամ գործողության մասին հայտարարություն տվող անձի ինքնությունը պետք է ստուգվի և գրանցվի ծննդյան վկայականի կամ ինքնությունը հաստատող այլ պաշտոնական փաստաթղթի հիման վրա: Ինքնությունը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում հայտարարություն տվող անձի ինքնությունը հաստատող երկու վկաների հայտարարությունը բավարար է:[84]

Ստորև ներկայացվում է այս ոլորտում մի շարք երկրների փորձը.

Լյուքսեմբուրգ – ՔԿԱԳ մարմինը երեխայի ծնողների մասին տեղեկությունները լրացնում է նրանց անձը հաստատող փաստաթղթերի կամ մեկ այլ փաստաթղթի հիման վրա, որը նրանք կկարողանան ներկայացնել: Գրանցումն իրականացնող մարմինը չի կարող մերժել ծննդի գրանցումը այն հիմքով, որ ծնողները չեն կարողանում ներկայացնել ինքնությունը հաստատող որևէ փաստաթուղթ: Նման դեպքերում գրառումները կատարվում են արված հայտարարությունների հիման վրա: Հետագայում, եթե պարզվում է, որ տեղեկությունները սխալ են, համապատասխան ընթացակարգով կատարվում են անհրաժեշտ ուղղումները:
Գերմանիա – Այն դեպքերում, երբ անհնարին է ներկայացնել ծնողների (հոր կամ մոր) անձը հաստատող փաստաթղթերը, գրանցումն իրականացնող մարմինը չի կարող մերժել ծննդի գրանցումը: Նման դեպքերում, գրանցման ակտը լրացվում է հայտնի տեղեկությունների հիման վրա՝ նշելով գրանցման սահմանափակ բազայի պատճառները: Միաժամանակ, եթե գրանցման ակտում կա վերապահում այն մասին, որ տվյալների մի մասը կամ դրանք ամբողջությամբ հաստատված չեն անհրաժեշտ փաստաթղթերով, նման վերապահումը փաստաթղթում ամրագրված ծնողների մասին գրառումներին տալիս է սահմանափակ ապացուցողական ուժ:

[84] United Nations Department of Economic and Social Affairs Statistics Division (1998), *Handbook on Civil Registration and Vital Statistics Systems: Preparation of a Legal Framework*.Series F, No. 71. New York, United Nations: http://unstats.un.org/unsd/publication/SeriesF/SeriesF_71E.pdf, page 117

Ֆրանսիա – երեխայի ծնողների մասին տեղեկությունները լրացվում են անձը հաստատող փաստաթղթերի հիման վրա, եթե նման փաստաթղթերը բացակայում են, ապա՝ նրանց հայտարարության հիման վրա: Նման հանգամանքներում կատարված ծննդի գրանցումը չունի ավելի նվազ ապացուցողական ուժ և չի պարունակում նշում այն մասին, որ տվյալները լրացվել են զուտ հայտարարության հիման վրա: Եթե հետագայում պարզվում է, որ տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, համապատասխան ընթացակարգով ուղղվում են սխալները:
Բելգիա – Ծնողների անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում գրանցումն իրականացնող մարմինը գրանցման ակտում գրառումները կատարում է արված հայտարարությունների հիման վրա: Եթե հետագայում պարզվի, որ տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, կատարված գրառումները կարող են ուղղվել միայն դատական որոշմամբ:
Հունգարիա – ծննդի գրանցման ակտում գրառումները կատարվում են հայտնի տեղեկությունների հիման վրա, որոնք անհրաժեշտության դեպքում լրացվում են հայտարարության հիման վրա: Եթե մոր ինքնությունը հետագայում կասկածի տակ է դրվում, մայրությունը կարող է վիճարկվել դատական կարգով:
Թուրքիա – ծննդի գրանցումն իրականացվում է ծննդի մասին տրվող տեղեկանքի հիման վրա, որտեղ նշվում է ծնողների ինքնությունը: Եթե նման փաստաթուղթ բացակայում է, գրանցումը կազմակերպվում է ծնողների բանավոր հայտարարության հիման վրա:[85]
Իտալիա – Գրանցումն իրականացնող մարմինը չի կարող մերժել ծննդի գրանցումը, եթե երեխայի հայրը կամ մայրը չեն կարող ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Նման դեպքում տվյալները լրացվում են 2 վկաների հայտարարությունների հիման վրա, ովքեր երաշխավորում են հոր կամ մոր ինքնությունը:

[85] Commission Internatinale De Letat Civil (2010) *"Persons deprived of civil status and identity documents («undocumented migrants»)"*, Strasburg, pages 17-22

11. ԾՆՆԴԻ ՉԳՐԱՆՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Սույն հետազոտության շրջանակում հարցված փորձագետներից շատերը նշել են, որ ծննդի գրանցման ընթացակարգում բացեր չեն տեսնում, ամեն ինչ շատ հստակ է. ***«Ընթացակարգը ճիշտ է սահմանված, ծնողները պետք է ավելի պարտաճանաչ գտնվեն»,*** ասում է ՔԿԱԳ մարմնի աշխատակիցը:

Սակայն առողջապահական ոլորտի փորձագետները (ծննդատուն, պոլիկլինիկա, կանանց կոնսուլտացիա), ՀԿ–ների ներկայացուցիչները, երեխայի խնամքի հաստատությունների աշխատակիցները և ԸԿԵԻՊԲ-ները որպես երեխայի ծնունդը չգրանցելու կարևորագույն ռիսկեր առանձնացրեցին հետևյալ ասպեկտները.

- Քաղաքացիներն ունեն բուժհիմնարկը ընտրելու իրավունք, որի արդյունքում հղի կինը կարող է հետազոտվել մի բուժհաստատությունում, ծննդաբերել այլ հաստատությունում, իսկ երեխային ընդգրկել մեկ ուրիշ շրջանի պոլիկլինիկայում: Արդյունքում հնարավոր է, որ բուժհաստատություններից ոչ մեկը չտիրապետի ծննդկանի և նորածնի վերաբերյալ լիարժեք տեղեկությունների: ***«Հղի կինն ինքն է ընտրում, թե որտեղ՝ որ բուժհաստատությունում հաշվառվել և որտեղ ծննդաբերել: Ո՞վ գիտի ծննդաբերելուց հետո այդ կինը ուր գնաց, ուր մնաց, ծննդատուն գնացել է թե ոչ, երեխայի ծնունդը գրանցել է թե ոչ»:***
  Հաստատությունները դուրսգրումից հետո պարտավոր չեն վերահսկողություն իրականացնել ծնունդների գրանցման նկատմամբ, հետևաբար նրանց միջև չկան տեղեկատվական համագործակցության, փոխադարձ կապի և հաշվետվողականության մեխանիզմներ, որոնք կնպաստեին չգրանցված ծնունդների հայտնաբերմանը և ծնունդների չգրանցման կանխարգելմանը:
- Որպես բուժհաստատության ազատ ընտրության հետևանք առաջ է գալիս ևս մեկ կարևոր խնդիր. ծննդաբերելուց հետո պոլիկլինիկայի կամ ամբուլատորիայի բուժքույրը պարտավոր է այցելել երեխային: Հեռավորությունը, ժամանակի կորուստը, տրանսպորտային ծախսերը դժվարացնում են բժիշկների աշխատանքը: Պոլիկլինիկաների կողմից կատարվող պատրոնաժի աշխատանքը շատ է դժվարացել թե՛ ֆիզիկապես, թե՛ ֆինանսապես: Հնարավոր չէ պոլիկլինիկայի աշխատողին ստիպել իր չնչին աշխատավարձից ծախսել տրանսպորտի կամ հեռախոսի համար, որ գտնի ու պարզի, թե հղին որտեղ է ծննդաբերել, ինչ խնդիրներ ունեն ծննդկանը և երեխան, ինչպես նաև՝ ծննդյան վկայական ունենալու փաստը: ***«Ես կարծում եմ, որ հետծննդյան պատրոնաժի աշխատանքն օրենքով թերի է: Այս դեպքում կամ պետք է ֆինանսավորումը ավելացվի, որ մենք կարողանանք վերահսկել, կամ անցնեն հին ձևին՝ հղին գրանցվի տարածքային պոլիկլինիկայի***

կոնսուլտացիայում: Դա հնարավորություն կտա վերահսկողությունից դուրս չթողել նաև երեխայի գրանցումը: Պոլիկլինիկայի թերապևտները լավ են ճանաչում իրենց թաղամասի բնակիչներին. ով մեկնեց, ով մնաց, ով երեխա ունեցավ»:

- Եթե խորհրդային տարիներին ծննդատունը ծննդաբերած կանանց և երեխաներին դուրս էր գրում միայն այն ժամանակ, երբ հայրը կամ հարազատները ծննդյան վկայականը ներկայացնում էին ծննդատուն, ապա այսօր ծննդկանին նախկինի պես երկար՝ 7-10 օր չեն պահում ծննդատանը, այլ «օբյեկտիվ պատճառներով» գրանցելու անհնարինության դեպքում դուրս են գրում երեք օր հետո, եթե չկան բուժհաստատությունում պահելու համար բժշկական ցուցումներ: Արդյունքում շատ դեպքերում չի գրանցվում երեխայի ծնունդը: *«Դեպքեր են եղել 2-3 տարի հետո եկել են, որ փաստաթուղթ տանք, որ գրանցեն: Շատ սխալ է, ինչո՞ւ պետք է մենք տարիներ հետո այդպիսի հարցով զբաղվենք»:*
- Շատ ԽՀՄ–ներ անգամ իրազեկված չեն, որ ունեն չգրանցված ծնունդները հայտնաբերելու գործառույթ. *«Չկա մեր լիազորությունների մեջ նման բան, չի բացահայտում խնամակալության մարմինը նման դեպքեր»:*
- Հատկապես ռիսկային են տանը տեղի ունեցող ծննդաբերությունները: Նման ընտանիքների հանդեպ վերահսկողությունը կարող են իրականացնել միայն ԽՀՄ–ները, եթե նշանակվեն պատասխանատուներ և խստացվեն նրանց նկատմամբ պահանջները: Գյուղական համայնքներում ծնունդների չգրանցման երևույթը ավելի հաճախ է հանդիպում: Վերոնշյալ գործոններին ավելանում է նաև գյուղում բուժհաստատությունների բացակայությունը, անհասանելիությունը. սովորաբար համայնքներում կա մեկ բուժքույր, *«ով տնետուն է գնում կամ չի գնում»* , ու երեխայի ծննունդը դարձյալ կարող է չգրանցվել և այդ մասին ոչ ոք տեղյակ չլինի: Ռիսկայնությունը մեծ է մարզերում, որտեղ չկան խորհրդատու գինեկոլոգներ, ծնունդ ընդունողներ և հասանելի են տնային մանկաբարձների (տատմայր) ծառայությունները: Առանց բժիշկի ծննդաբերության դեպքում պատասխանատվությունն ամբողջությամբ մնում է ծնողի վրա, որևէ մարմին նրա հայտնաբերմամբ չի զբաղվում, մինչ երեխան չի հայտնվում այս կամ այն հաստատության ուշադրության կենտրոնում՝ բուժօգնություն ստանալու, կրթություն ստանալու և այլ խնդիրների դեպքում: *«Հիմնական գրանցումներ չլինելու պատճառն այն է, որ, օրինակ, Դսեղից պետք է ծախս անի, գնա Վանաձոր, Վանաձորից գնա հետ»:*
- Ծնողների՝ անձը հաստատող փաստաթղթերի բացակայությունը կամ անվավերությունը նույնպես ռիսկային է դարձնում երեխայի ծննդի գրանցումը, քանի որ նման դեպքերում ՔԿԱԳ մարմինը չի կարող իրականացնել ծննդի գրանցում: Եթե այս իրավիճակում մեկ այլ շահագրգիռ անձ ցանկանա հայտարարություն տալ ծնողների փոխարեն, նա չի կարող բուժհիմնարկից

վերցնել երեխայի ծննդյան մասին բժշկական վկայական: *«Ես կցանկանայի, որպեսզի սահմանվեր մի ընթացակարգ, որ նման դեպքերում հաշվի չառնվեր ծնողների անձը հաստատող փաստաթղթերի բացակայությունը, և միևնույնն է, երեխայի ծնունդը գրանցվեր»:*

- Արտերկրում տեղի ունեցած ծնունդների գրանցման դժվարությունները կապված են այն խնդրի հետ, որ հարցումների պատասխանները բավական երկար ժամանակ չեն ստացվում:
- Միգրացիայի աճող ծավալները նույնպես ավելացնում են ծնունդների գրանցման ռիսկայնությունը: Արտերկրում ունենում են երեխա, ժամանակին չեն գրանցում, կամ սահմանն անցնելու ժամանակ փաստաթղթերը կորցնում են:

Բոլոր փորձագետների պնդմամբ՝ նախկինում ծննդի չգրանցման դեպքերն ավելի հաճախ էին տեղի ունենում: 2000 թվականից հետո նման դեպքերը պակասել են: Տարբեր պետական միջոցառումներ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստել են ծնունդների գրանցման մակարդակի բարձրացմանը:

Այսպես՝ դեռևս 2005թ. հունիսի 16-ի կառավարության N 949-Ն որոշմամբ ստեղծվել է մանկական մահացության ու ծնունդների գրանցման և դասակարգման հիմնախնդիրների հետ կապված իրավիճակի բարելավման գործընթացը համակարգող **միջգերատեսչական խորհուրդ**: Կառավարության որոշմամբ սահմանվում է նաև ծնունդների գրանցման և դասակարգման հիմնախնդիրների հետ կապված իրավիճակի բարելավման գործողությունների ծրագիրը:

2010թ. մարտի 23-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարի մոտ կայացած խորհրդակցության թիվ 23-03Կ արձանագրության 1-ին կետի հանձնարարականի համաձայն՝ 2010թ. մայիսի 1-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարի գլխավորությամբ ստեղծվել է **միջգերատեսչական աշխատանքային խումբ**՝ ՀՀ-ում ծննդի գրանցում չունեցող երեխաների և մանկական մահացության գրանցման հետ կապված խնդիրների վերհանման վերաբերյալ: Աշխատանքային խմբի նպատակն էր այս ոլորտում ստեղծել և ներդնել իրական գործուն մեխանիզմներ՝ կանխելու ծնունդների չգրանցման դեպքերը և հայտնաբերելու ծննդի գրանցում չունեցող երեխաներին և չափահաս անձանց՝ վերջիններիս ապահովելով համապատասխան փաստաթղթերով:

Աշխատանքային խմբում ընդգրկվել են մասնագետներ տարբեր գերատեսչություններից[86], որոնցից յուրաքանչյուրը ներկայացրել է իր ոլորտի իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ,

[86] ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

իսկ ՀՀ կառավարության 2010թ. սեպտեմբերի 3-ի N34 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում երեխաների ծնունդների և մահերի գրանցման, ինչպես նաև՝ հաշվառումից դուրս մնացած երեխաների գրանցման նպատակով իրավական ակտերի մշակման ժամանակացույցը:[87]

Ծննդի գրանցման նպաստող միջոցառումների շարքում առավել հաճախ հնչել է **երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրումը** որպես ծննդի չգրանցման կանխարգելիչ միջոց. ծնողները շահագրգռված են ծնունդը գրանցել, որպեսզի ստանան միանվագ նպաստ: Այն խթանում է թե՛ ծնելիության մակարդակի բարձրացումը և թե՛ ծննդի գրանցումը:

Ընտանեկան նպաստների համակարգը նույնպես օգնում է ծնունդների գրանցմանը, քանի որ ընտանիքում, անչափահաս երեխաների թվով պայմանավորված, աճում է նաև նպաստի չափը:

Աշխատող մայրերի համար երեխայի ծննդի գրանցումը անհրաժեշտ է **հղիության և ծննդաբերության արձակուրդը** ձևակերպելու համար:

Ծնունդների գրանցմանը նպաստող միջոցառումների շարքում կարելի է նշել նաև **ծննդօգնության պետական հավաստագրերի ներդրումը**. նշված հավաստագիրը ստանալու համար անհրաժեշտ է, որ ծնողների անձը հաստատող փաստաթղթերը նախապես պատշաճ վիճակում լինեն:

2009 թվականից հավաստագրային համակարգ է ներդրվել Հայաստանում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ստանալու առնչությամբ: Մինչև 2013 թվականի հունվարը հղին իրավունք ուներ այդ հավաստագրով Հայաստանի ցանկացած ծննդատանը ծննդալուծվելու՝ ըստ իր ցանկության: Հունվար ամսից յուրաքանչյուր հղի պետք է ծննդաբերի իր մարզում: Հավաստագրով այլ մարզեր կարող են ուղղորդվել այն հղիները, ովքեր բարձր ռիսկի խմբի մեջ են մտնում ըստ բժշկական ցուցանիշների: Այն ծննդկանը, որը բարձր ռիսկի խմբին չի պատկանում և ցանկանում է Երևանում ծննդաբերել պետք է վճարի: Անվճար ծննդօգնությունը նպաստեց ավելի հաճախ ծննդատներ դիմելուն, որի արդյունքում նվազեցին տնային ծնունդների դեպքերը: Հղիները անվճար են սպասարկվում, ինչը կանանց կոնսուլտացիաների աշխատանքը շատ հեշտացրել է: Հղին չի խուսափում ծննդատանը ծննդաբերելուց և վտանգներից հեռու է մնում. և՛ երեխան է ծնվում առանց բարդությունների, և՛ ծննդի գրանցումն է ավելի հավանական դառնում:

Հղիների նկատմամբ նախածննդյան հսկողություն իրականացնող բժշկական կազմակերպությունը[88] իրականացնում է խորհրդատվություն հղիների համար՝

[87] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ուղղված հարցման պատասխան N ԱՊ/ՎԲ-3/8847-13, նոյեմբերի 21, 2013թ.

[88] Կանանց կոնսուլտացիա, ծննդատուն, գյուղական բժշկական ամբուլատորիա, գյուղական առողջության կենտրոն և այլն

ծննդաբերության և նորածնի դուրսգրման հետ կախված բժշկական փաստաթղթերի անհրաժեշտության մասին:

Մանկապարտեզ և դպրոց ընդունվելու համար նույնպես ծննդի գրանցումը անհրաժեշտ է: Այս կապակցությամբ՝ բնակչության պետական ռեգիստրի կայացման, ինչպես նաև՝ երեխաների ծննդի չգրանցման դեպքերի բացառման նպատակով փոփոխություն իրականացվեց ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. N1640-Ն հրամանում, որով երեխային դպրոց ընդունելու կամ տեղափոխելու դեպքում ներկայացվող փաստաթղթերի շարքում նախատեսվեց նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը: Իրականացված փոփոխության արդյունքում՝ 2011թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ը բնակչության պետական ռեգիստրում գրանցվեց 406.452 երեխա, որոնցից 289-ը, համաձայն ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած տեղեկատվության, մինչ այդ գրանցված չէին քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում:[89]

ՔԿԱԳ–ներում, որպես ծնունդների գրանցմանը նպաստող գործոն, նշեցին, որ այժմ **աշխատանքի են ընդունում միայն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում (իրավաբանական) ունեցող անձանց**, որը հեշտացնում է աշխատանքը, քանի որ նրանք գիտակ են և ունակ են արդյունավետ իրականացնել նախատեսված գործառույթները:

Այն, որ **չգրանցված ծնունդների հայտնաբերումն ամրագրվել է որպես ԽՀՄ գործառույթ,** նույնպես կարևոր քայլ է, սակայն չկան հայտնաբերման մշակված մեխանիզմներ: Բացի այդ, ԽՀՀ–ներն աշխատում են անհատույց (հասարակական սկզբունքով), ինչը նվազեցնում է աշխատողների՝ աշխատանքի նկատմամբ մոտիվացիան և պատասխանատվությունը:

2009 թվականից հետո ծնունդների չգրանցման խնդիրը ՀՀ վարչապետի ու Տարածքային նախարարի ուշադրության կենտրոնում է: **Փոխվարչապետի հրահանգով բոլոր դպրոցներում երեխաներին սկսեցին հաշվառել միայն ծննդյան վկայականով**, ինչը նպաստեց, որ դպրոցները շատ ավելի ուշադիր լինեն ծննդի գրանցման խնդրին:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրված ՀԿ–ների գործունեությունը թույլ տվեց անել հետևյալ եզրահանգումները: Երեխաների հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ–ները ավելի շատ տեղեկություններ ունեն ծննդի գրանցման հետ կապված խնդիրներ ունեցող ընտանիքների և երեխաների մասին, քան պետական հաստատությունները: Հիմնական պատճառն այն է, որ ծննդի չգրանցման դեպքերը հայտնաբերման

[89]Տարածքային կառավարման նախարարություն, «Տեղեկանք 2011 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների տարեկան իրականացման արդյունքների», http://www.mta.gov.am/files/docs/260.zip

արդյունավետ մեխանիզմ պետական կառույցները չունեն։ Սակայն ՀԿ–ները, աշխատելով հասարակության առավել խոցելի, անապահով, ցածր կրթական մակարդակ ունեցող խմբերի հետ, կատարելով տնայցեր և մատուցելով սոցիալական ծառայություններ՝ հայտնաբերում են ամենատարբեր դեպքերը. ***«Մեզ երեխաների ծննդի գրանցման հարցերով չեն դիմել, մենք ինքներս ենք հայտնաբերել»։***

ՀԿ–ները, գործի դնելով առկա ռեսուրսները և ընտանիքի հետ սոցիալական աշխատողների հետևողական աշխատանքը, կարողանում են օպերատիվ ձևով աջակցել ծնունդների գրանցմանը։ Սակայն այն դեպքերում, երբ ծննդի գրանցումը անհրաժեշտ է իրականացնել դատական կարգով, թե՛ ՀԿ-ները և թե՛ ԽՀՄ-ները, որպես կանոն, խուսափում են այդ հանձնառությունից՝ ռեսուրսների բացակայության պատճառով։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Բժշկական հաստատությունում կազմակերպել երեխաների ծննդի պարտադիր գրանցումը**: Դա կարող է արվել՝
  - ծննդատան վարչական անձնակազմի լիազորված ներկայացուցչի կողմից,
  - ՔԿԱԳ աշխատակցի կողմից, ով կայցելի բժշկական հաստատություն և կիրականացնի ծննդի գրանցում,
  - բուժհիմնարկում գործող ՔԿԱԳ բաժանմունքի կողմից, որը կկատարի ծննդի և մահվան ակտային գրանցումները:
- **Անհրաժեշտ է բժշկական հաստատություններից առանց ծննդյան գրանցման դուրս գրվող երեխաների վերաբերյալ տեղեկությունը պարբերաբար ամփոփել և տարածել պատասխանատու մարմինների շրջանակում**: Օրենքով սահմանել, որ բժշկական հաստատություններն այս դեպքերի մասին իրազեկեն բոլոր կառույցներին և առաջին հերթին ԽՀՄ–ներին, որպեսզի նրանք գործին ընթացք տան և համապատասխան վերահսկողություն իրականացնեն:
- **Ծնունդների գրանցմանը կնպաստի այն, որ պոլիկլինիկաները ծննդի գրանցման բացակայության մասին տեղեկանալու դեպքում տեղեկացնեն նաև մյուս պատասխանատու մարմիններին** (ԽՀՄ, ԸԿԵԻՊԲ, ոստիկանություն և այլն):
- **Կարելի է կազմել տվյալների էլեկտրոնային բազա**, որը հասանելի կլինի ծննդատանը, ՔԿԱԳ մարմիններին, համայնքներին, ոստիկանությանը, որտեղ գրանցված կլինեն երեխայի ծննդյան վերաբերող բժշկական փաստաթղթերը և ծնողների մասին տեղեկությունը (կոնտակտային, անձնագրային տվյալներ և այլն), ինչպես նաև՝ ծննդի գրանցված և չգրանցված դեպքերը:
- **Անհրաժեշտ է բարձրացնել ԽՀՄ-ների և ԽՀՀ-ների իրազեկվածությունը չգրանցված ծնունդների հայտնաբերման իրենց գործառույթի մասին:**
- **Անհրաժեշտ է ներդնել ԽՀՄ-ների և ԽՀՀ-ների կողմից չգրանցված ծնունդների բացահայտման հստակ մեխանիզմներ:** Սա հնարավոր է իրականացնել պատկան մարմինների միջև ԱԾԽՄ երեխաների հայտնաբերման մեխանիզմին համանման հայտնաբերման մեխանիզմն ներդնելու միջոցով կամ տվյալների բազայի ներդրմամբ, որը կապահովի պատկան մարմինների միջև համագործակցությունը և հնարավորություն կընձեռի արդյունավետ կերպով վերահսկել ծնունդների գրանցումը:
- **Անհրաժեշտ է ԽՀՀ-ներում ընդգրկել երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրազեկ մասնագետների կամ վերապատրաստել ներկա մասնագետներին, ինչպես նաև ապահովել. որ այդ գործառույթն իրականացնող մասնագետը վարձատրվի և պատասխանատվություն կրի տվյալ գործառույթի իրականացման համար:**
- **Անհրաժեշտ է սահմանել օտարերկրյա պետություններ կատարվող հարցումների պատասխանին սպասելու հստակ ժամկետներ** ՝ նախատեսելով,

որ նշված ժամկետում պատասխան չստանալը չի կարող խոչընդոտել ծննդի գրանցմանը:

- **Օրենսդրական մակարդակով անհրաժեշտ է սահմանել անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում ծնողների ինքնության մասին տվյալների գրառման կարգ,** օրինակ՝ սահմանելով, որ ինքնությունը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում հայտարարություն տվող անձի ինքնությունը հաստատող երկու վկաների հայտարարությունը բավարար է այդ մասին տվյալները գրառելու համար:
- Անհրաժեշտ է նախատեսել, որ այն դեպքում, երբ բժշկական կազմակերպությունը տեղեկացնում է ՀՀ ոստիկանությանը ծննդկանի անձը հաստատող փաստաթղթի բացակայության և վերջինիս անձի անհայտ լինելու մասին, իսկ ոստիկանությունը չի կարողանում պարզել ծննդկանի անձը մինչև վերջինիս բժշկական հաստատությունից դուրս գրելը, ոստիկանությունը պետք է տեղեկացնի դրա մասին բժշկական հաստատությանը և հաստատությունը պետք է դիմի ՔԿԱԳ մարմնին ծննդի գրանցման համար, ինչպես ներկայումս նախատեսված է երեխայի հոր հետ ամուսնության մեջ չգտնվող երեխայի մոր մահվան դեպքում:
- Հաշվի առնելով, որ կանանց կոնսուլտացիայի ժամանակ ծննդի գրանցման ընթացակարգի մասին հղիները հաճախ լիարժեք և ճշգրիտ չեն տեղեկացվում և ուղղորդվում, կարելի է հղիների նկատմամբ նախածննդյան հսկողություն իրականացնող բժշկական կազմակերպություններում ներդնել սոցիալական աշխատողի հաստիք, ով կստանձնի ուղղորդողի, իրազեկողի դերը:
- **Անհրաժեշտ է 18 տարին լրացած անձանց ծննդի պետական գրանցման նկատմամբ ներկայումս կիրառվող ՔԿԱ-երի գրանցումները վերականգնելու կանոնների փոխարեն սահմանել հստակ օրենսդրական կարգ**, ինչը թույլ կտա վերացնել ներկայումս գործող փաստաթղթային և ընթացակարգային խոչընդոտները:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ծննդի գրանցում չունեցող երեխաների ընտանիքների ուսումնասիրություն

Ծնունդների գրանցման գործընթացի համակողմանի ուսումնասիրության համար հավաքագրել են ՀՀ տարբեր համայնքներում բնակվող ծննդի գրանցում չունեցող երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ բազմակողմանի տեղեկություններ, ինչը հնարավորություն տվեց հասկանալ ծնունդը չգրանցելու պատճառները և նախապայմանները, ինչպես ինստիտուցիոնալ մակարդակում (*մակրոմակարդակում*), այնպես էլ՝ տվյալ ընտանիքի (*մեզոմակարդակում*)։ Այդ նպատակով հարցազրուցավարները ԸԿԵԻՊԲ և ոլորտում գործող ՀԿ–ների աջակցությամբ գտել են նման երեխաներ և ընտանիքներ, այցելել, զրուցել ընտանիքի անդամների հետ։

Ստորև բերված են հավաքագրված դեպքերի համառոտ պատմությունները։

ԴԵՊՔ 1

Լոռու մարզի բնակիչ 2,5 տարեկան Մ.Օ.-ի ծնունդը տեղի է ունեցել տանը, առանց հետծննդաբերական հոսպիտալացման, որի պատճառով երեխան չունի ծննդյան մասին բժշկական վկայական։ Մայրը տնային ծննդաբերության և ՔԿԱԳ մարմնում գրանցման բացակայության փաստը բացատրում է նրանով, որ ընտանիքում հիվանդ անդամ կա, որին նա չէր կարող միայնակ թողնել և գնալ հիվանդանոց կամ ՔԿԱԳ տարածքային բաժին։ Ներկայումս մայրը գրանցման ուղղությամբ քայլեր չի ձեռնարկում. սպասում է արտերկրից ամուսնու վերադարձին։

ԴԵՊՔ 2

Գեղարքունիքի մարզի բնակիչ 13 ամյա Ս.Ղ.-ն բնակվում է «խորթ մոր» մոտ և գտնվում է նրա խնամքի տակ։ Գյուղապետարանի միջնորդությամբ՝ երեխան հաճախում է դպրոց, օգտվում պոլիկլինիկայի ծառայություններից, գյուղապետարանը հումանիտար օգնություն է տրամադրում ընտանիքին։ «Խորթ մայրը» նշում է, որ երբևէ չի անհանգստացել երեխայի ծննդի գրանցման վերաբերյալ, սպասում է, որ գյուղապետարանը ինչ-որ քայլեր ձեռնարկի, և չի պատկերացնում, թե ինչ քայլեր են պահանջվում իր կողմից։ Առկա է ծննդի մասին բժշկական տեղեկանք,

որը հայրն իր մոտ է պահում: Հոր ապրելու վայրը հստակ չգիտեն, նա խոստանում է բերել բժշկական տեղեկանքը, բայց դեռևս չի բերել:

ԴԵՊՔ 3

Գեղարքունիքի մարզի բնակիչ 6 տարեկան Է.Հ.-ն ծնվել է հիվանդանոցից դուրս և ներկայումս բնակվում է հոր հետ: Երեխայի ծննդի գրանցման անհրաժեշտության մասին ծնողները տեղեկացել են , երբ եկել է երեխային դպրոց ընդունելու ժամանակը: Դիմել են ՔԿԱԳ մարմին, որտեղ անհրաժեշտ է ներկայացնել ծնողների անձը հաստատող փաստաթղթերը և ամուսնության վկայականը: Այժմ մայրը եկել է, բերել է իր անձնագրի պատճենը, որպեսզի ուղարկեն ՔԿԱԳ, երեխայի ծնունդը գրանցեն:

ԴԵՊՔ 4

Գեղարքունիքի մարզի բնակիչ 9 ամսական Գ.Է.-ի ծ ն ո ւ ն դ ը գրանցված չէ, քանի որ երեխայի ծնողների ամուսնությունը գրանցված չէ:

ԴԵՊՔ 5

Արագածոտնի մարզում բնակվում է ընտանիք, որի բոլոր անդամները՝ մայրը և չորս զավակները, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեն: Աղջիկներից մեկը երեխա էր ունեցել, ում տեղափոխել են մանկատուն, որը և կազմակերպել էր երեխայի ծննդի գրանցումը: Իսկ մյուս քույրը ունի երեխա, որը նույնպես տանն է ծնվել և չունի ծննդի գրանցում: Ընտանիքի մտավոր խնդիրների պատճառով համայնքի բնակիչները խուսափում են նրանց հետ շփվել:

ԴԵՊՔ 6

Վանաձորի մանկատանը խնամվում է 1,5 տարեկան երեխա, ում մայրն անձը հաստատող փաստաթուղթ չունի, և երեխայի ծնունդը առայժմ չի գրանցվել: Մայրը ներկա պահին գտնվում է ՌԴ-ում, փորձում է փաստաթղթերը կարգի բերել:

ԴԵՊՔ 7

Ծաղկահովիտի ծննդատանը ծնված երեխայի ծնունդը գրանցված չէ, քանի որ ծննդատան գրանցումների և մոր փաստաթղթերի միջև անհամապատասխանություն կա: Փաստաթղթերում մոր մասին տվյալները սխալ են նշված, սակայն ծնունդն ընդունող բժիշկը չի համաձայնվում ուղղումներ կատարել, ասելով, որ ժամանակ է անցել, և նա համոզված չէ, թե որն է ճիշտ:

ԴԵՊՔ 8

Լոռու մարզի բնակիչ 10 տարեկան Ա.Ա.-ն ծնվել է Վրաստանում տնային պայմաններում: Երեխան չունի ծննդյան մասին բժշկական փաստաթուղթ, որը հնարավորություն կտա իրականացնել ՔԿԱԳ մարմնում ծննդի գրանցումը: Մայրը, գիտակցելով երեխայի ծնունդը գրանցելու անհրաժեշտությունը, դիմել է տարբեր ատյանների՝ գյուղապետարան, մարզպետարան, ՔԿԱԳ մարմին՝ Ստեփանավանի ու Վրաստանի: Ստեփանավանի ՔԿԱԳ մարմնում կոպիտ ձևով պատասխանել են, որ ոչինչ չեն կարող անել և պահանջել են Վրաստանի ՔԿԱԳ մարմնից փաստաթուղթ, որ երեխան այնտեղ գրանցված չի: Մի քանի անգամ դիմել են, ՔԿԱԳ մարմինը խոստացել է «մաղարիչով» անել, ինչի համար ընտանիքը վարկ է վերցրել: Բայց ՔԿԱԳ մարմինը գրանցումը չի կատարել, և մաղարիչը չեն տվել: 2013-ի գարնանը մայրը գնացել է Վրաստան, դիմել է այնտեղի գրանցման մարմին, որ փաստաթուղթ տան, որ երեխան իրենց մոտ գրանցված չէ, բայց այնտեղ ոչ մի փաստաթուղթ չեն տրամադրել՝ ասելով, որ ինքը այնտեղի քաղաքացի չէ, Վրաստանի գրանցում չունի ու իրենք իրավասու չեն ոչ մի փաստաթուղթ տալ: Երեխան հաճախում է դպրոց, որտեղ նրան մեծ դժվարությամբ են ընդունել՝ գյուղապետի միջնորդությամբ:

ԴԵՊՔ 9

Լոռու մարզի բնակիչ 16 տարեկան Գ.Ա.-ն ծնվել է Ռուսաստանի Կուրսկ քաղաքի հիվանդանոցում, որտեղ երեխային տվել են ծննդի մասին բժշկական տեղեկանքը: Մայրը բժշկական տեղեկանքը հանձնել է Վանաձոր քաղաքի պոլիկլինիկային, որից մեկ շաբաթ հետո փաստաթղթերը կորել են: Այս պատճառով անհնար է դարձել ՔԿԱԳ մարմնում ծննդի գրանցումը: Մայրը դիմել է տարբեր մարմինների՝ քաղաքապետարան, մարզպետարան, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, սակայն անարդյունք: Քաղաքապետարանը հարցում է ուղարկել Կուրսկի ծննդատանը, որ փաստաթղթերը կամ պատճենները ուղարկեն, որի պատասխանը 2 տարի է չկա: Դատարան չի դիմում, քանի որ «*նորից հարցում պետք է կատարվի, որը կապված է լրացուցիչ ծախսերի հետ: Եթե իրենք զբաղվեն նման հարցերով, վճարը իմ ուժերից բարձր է լինելու, ես չեմ կարող նման գումար տալ*»: Մոր կարծիքով. «*Հարցին լուծում չկա, միակ տարբերակն այն է, որ մյուս տարի արդեն տղայիս բանակի կոմիսիայի ժամանակն է գալիս, արդեն բնական է, որ կբերեն անձնագիրը կտան կասեն վերցրու, տեղը գիտեն: Այդ ժամանակ արդեն ես չեմ թողն, որ տանեն»:* Երեխան ծննդական չունենալու պատճառով հաճախել է օժանդակ դպրոց, ավարտել է առանց ատեստատի, հիմա ցանկություն ունի ուսումը շարունակել, բայց չի կարող, քանի որ փաստաթղթեր չկան:

ԴԵՊՔ 10

Լոռու մարզի բնակիչ 16 տարեկան Վ.Տ.-ն ծնվել է Վրաստանում հիվանդանոցում, որտեղ տվել են երեխայի ծննդի մասին բժշկական տեղեկանքը: Երկու ամսական ժամանակ երեխային բերել են Հայաստան, չեն կարողացել ծննդականը հանել, քանի որ այդ ժամանակ ՔԿԱԳ մարմնում կաշառք են ուզել, մայրը հնարավորություն չուներ կաշառք տալու: Երբ ՔԿԱԳ մարմնի վարիչները փոխվեցին, առաջ եկավ Վրաստան հարցում անելու խնդիրը՝ այնտեղ ծննդի գրանցման փաստը բացառելու նպատակով: Մայրը ՔԿԱԳ մարմնի անունից մոտ երեք տարի առաջ նամակ-հարցում է ուղարկվել Վրաստան: Մարզպետարանը ևս հարցում է արել, հիմա սպասում են պատասխանի:

Ընտանիքը դատարան չի դիմել, քանի որ դա կապված է ծախսերի հետ: Խնամակալության մարմինը ևս չի դիմում դատարան, փոխարենը խորհուրդ է տալիս, որ մայրը գնա Վրաստանում ծնունդը գրանցի, սակայն վերջինս հնարավորություն չունի Վրաստան գնալու: Երեխան ծննդական չունենալու պատճառով հաճախել է օժանդակ դպրոց, ավարտել է առանց ատեստատի: Շատ են պայքարել, որ այդ դպրոցից «նորմալ» դպրոց տեղափոխեն, բայց չեն կարողացել: Մայրը նշում է. *«Արդեն 1 տարի է՝ ոչ մի տեղ չեմ դիմում. հույս չունեմ, որ հարցը օրինական ճանապարհով կլուծվի: Եթե 16 տարի չի արվել՝ այն դեպքում, երբ գրանցման հիմք հանդիսացող բժշկական փաստաթուղթը կա, դա կարվի միայն բանակ գնալու ժամանակ: Բայց չեմ թողնելու՝ գնա ծառայի, պետության ոչ մի օգնությունից 16 տարի է չի օգտվել, հիմա ո՞ւմ համար պետք է գնա ծառայի»:*

ԴԵՊՔ 11

Արագածոտնի մարզի բնակիչ 2 տարեկան Մ.Հ.-ն ծնվել է Հոլանդիայում, որտեղ նրան տվել են փաստաթուղթ, որում նշված է ծննդյան վայրը, օրն ու մոր անուն ազգանունը, բայց չկա ո՛չ համար, ո՛չ սերիա: Մայրը համարել է, որ դա ծննդյան վկայական է: Փաստաթուղթը նիդերլանդներից թարգմանել են հայերեն և դիմել ՔԿԱԳ-ին ծննդի գրանցում իրականացնելու համար, սակայն ՔԿԱԳ–ն մերժել է, հիմնավորելով, որ դատարանի որոշում է պետք, իսկ մայրը դատարան դիմելու ու հարցում անելու միջոց չունի:

<u>Լուծված դեպքեր</u>

ԴԵՊՔ 12

Արագածոտնի մարզի բնակիչ 10 տարեկան Ս.-ն ծնվել և մեծացել է Ռուսաստանում: Հետագայում տեղափոխվել է Հայաստան և բնակվել տատիկի հետ: Երեխայի ծնունդը ՌԴ-ում գրանցված չի եղել, իսկ ՀՀ ՔԿԱԳ մարմնում ասել են, որ ծննդի գրանցումը

իրականացնելու համար անհրաժեշտ է ծնողների ներկայությունը, ովքեր այդ պահին գտնվել են ՌԴ-ում: Հետագայում կարողացան օրինական գրանցում ստանալ ՌԴ-ում Հայաստանի դեսպանատան միջոցով: Այնտեղ գրանցեցին ծնունդը և փաստաթղթերը ուղարկեցին Հայաստան:

ԴԵՊՔ 13

Երևան քաղաքի բնակիչ 10 տարեկան Մ.Ա.-ն ծնունդը գրանցվել է 2013թ.: Երեխան ծնվել է Հայաստանում տան պայմաններում և բնակվում է տատիկի և պապիկի հետ: Երեխայի տատիկին 10 տարի չէր հաջողվում կազմակերպել ծննդի գրանցումը սկզբից իրազեկված չլինելու պատճառով: Ընտանիք այցելել են Երեխաների աջակցության հիմնադրամից, փաստաբանական խորհրդատվություն են տրամադրել: 3 անգամ դիմել են դատարան ու 3-րդ անգամ նոր կարողացել են ստանալ երեխայի ծննդականը: Հիմնական բարդությունը կայանում էր նրանում, որ ծննդի գրանցումը կազմակերպելու համար երեխան նախ պետք է ճանաչվեր առանց ծնողական խնամքի մնացած, որի համար պետք էր գտնել ծնողներին և նոտարական կարգով հաստատել երեխայից հրաժարումը, որից հետո միայն տատիկն ու պապիկը կարող էին ճանաչվել որպես երեխայի խնամակալ և դիմել ծննդի գրանցման համար:

ԴԵՊՔ 14

Արագածոտնի մարզում բնակվող երեխան ծնվել է Ռուսաստանում, որից հետո տեղափոխվել են Հայաստան: Երեխան ունեցել է բժշկական քարտ, որում եղել են անճշտություններ՝ մասնավորապես, միայն մոր անունն է նշված եղել, այն էլ ոչ ճշգրիտ, իսկ հոր անունը նշված չի եղել:

ՀՀ ՔԿԱԳ մարմնում ծնունդը գրանցելու համար տեղեկացրել են, որ պետք է հարցում անել Ռուսաստան, որովհետև կարող է այնտեղից էլ է գումար ստացել, այստեղից էլ է ուզում ստանալ: Արդարադատության նախարարության աշխատակիցներից մեկը հուշել է, որ հարցման պատասխանը արագ ստանալու համար կինը կարող է նամակ գրել և մեկի «ձեռքով» ուղարկել Ռուսաստան, այնտեղից էլ պատասխանը կարող են առձեռն ստանալ և բերել-ներկայացնել ՔԿԱԳ մարմնին: Այդ ճանապարհով միայն հարցման պատասխանը բերեցին: Գործընթացը տևեց շուրջ երեք ամիս:

ԴԵՊՔ 15

Արագածոտնի մարզում բնակվում է բազմազավակ ընտանիք՝ ութ երեխա, ծնողները, տատիկը: Կրտսեր երեխան, ծնվելուց հետո երկու ամիս չի ունեցել ծննդյան վկայական, սակայն առանց դժվարության, ամբուլատորիայի օգնությամբ գրանցվել է: Ծնողները պատճառաբանում են, որ «ժամանակ չեն ունեցել» ծնունդը գրանցելու համար:

ԴԵՊՔ 16

ԸԿԵԻՊԲ–ն աշխատում էր մի կնոջ հետ, ում չորս երեխաների ծնունդը գրանցված չէր։ Հայրը մահացել էր։ Բաժնի մասնագետները, ոստիկանության անչափահասների տեսուչը տեղեկացնում էին կնոջը, հորդորում, որ գրանցի երեխաների ծնունդը, սակայն մայրը լաց էր լինում. «*Իմ երեխաներն են, ձեր ի՞նչ գործն է, ես վշտի մեջ, ի՞նչ եք ուզում ինձնից*»: Ընտանիքը նպաստ և կենսաթոշակ չէր ստանում՝ ասելով, որ ամուսնու մահվան հաշվին փող չի ուզում ստանալ: Շատ ջանքեր պահանջվեցին ինչպես ԸԿԵԻՊԲ աշխատակիցներից, այնպես էլ դպրոցի մանկավարժներից, որպեսզի 2012թ. երկրորդ կեսին բոլոր երեխաների ծնունդը գրանցվի:

ԴԵՊՔ 17

Ծննդատուն մի կին եկել էր ծննդաբերելու մահվան վկայականով: Ծննդատան բժիշկները, վարիչը իրենց միջոցներով մորը նկարեցին, նկարը փակցրին բժշկական տեղեկանքի վրա, որ այդ երեխայի մայրն է և այդ փաստաթղթով դուրս գրեցին: Դատական կարգով մորը ողջ ճանաչեցին, անձնագրի հարցը լուծվեց և երեխայի ծնունդը գրանցեցին:

ԴԵՊՔ 18

Երեխա ունենալուց մեկ շաբաթ հետո մայրը հիվանդանոցում մահացավ, երեխան մնաց առանց գրանցման: Ամուսնությունը գրանցված չէր: Հետագայում հայրությունը ճանաչվեց և երեխայի ծնունդը գրանցվեց: